

ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.	Օրագիր և Լրագրութիւն.....	Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ
ԸՆԿ. ԽՆԴԻՐՆԵՐ.	Դրամագլուխ և Աշխատութիւն	ԵԱՆՔԻՆ
ՊԱՏՄԱԿԱՆ.	Ազգային նշխարներ.....	Գ. Վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՅ
ՆՈՐԱՎԷՊ.	Կրօնք քղյր (ժիւղիւն Պէր ՏԸ ԹԻՐԻԲ).	Տ. ՀԷՔԻՄԵԱՆ ՍԻՆԻ
ԱՐՃԵՍՏԱԿԱՆ.	Ազատութեան արձան	Մ. ՉՕՊԱՆԵԱՆ
ՔԱՂԱՔԱՅ ՇԱՐ. ԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Ազգային.....	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ.	(Կղալիէ ալ Մոնթէքէն) Թարգմ.....	

ՊԱՅՄԱՆ Ք ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻԱ.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
»	վեցամսեայ.....	Քառ » »
ԳԱԼԱՆՆԵՐ	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դահ. արծաթ
ՄԷԿ ԹԵՐԹԻՆ ԳԻՆՆ Է.....	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛ր և է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւիք և Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորատուրկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԳՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 28 Յուլիս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ պանքայի)		444 1/4
3 » » » (վճռական)		440 7/8
3 » Բարիլի » (պանքայի)		22 72 1/2
3 » » » (վճռական)		22 80

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՎԹՈՑ

Օսմանեան Քոնսոլիտի

	Գահեկան
Երեկ երեկոյ Գոյ. (Միաց. D. Սէ. Ի)	48 1/2
Պորսային գոցուեցէն վերջը »	48 6
Բերայի մէջ »	— —
Առաւօտուն բացուեցաւ »	48 8
Բարձրագոյն գին »	48 8 1/2
Նուաղագոյն »	48 7
Կէս օրին »	48 8 1/2
Փոխառութիւն 1858) A. Սէ. Ի. Գ. Կ. Ա. Ո.	32 40
» 1862)	
» 1860)	
» 1863) B.	48 40
» 1872)	
» 1865)	
» 1869) C. » Դ. Բ.	48 7
» 1873)	

Իւնիֆիէ Եգիպտական

Երեկ Իրիկուն գոցուեցաւ		72 25 25
Այս առաւօտ բացուեցաւ Գ. Կ.		722 7 1/2
Կէս օրին		72 27 1/2

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօրիւթէ Ժէնէրալ	 Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 4
Քրէտի Ժէնէրալ	 » » Օսմ. »	6 28
Պանք տը Գոնա	 » » » »	4 30
Սոս. Նանտ Է Վալէօր	 » » » »	3 30
Բրամուէյ	 » » » »	290
Բուսէլիի երկաթուղի	 Ֆր.	42 25
Օպլիկատիս տը Բրիտիւթէ	 »	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի	 »	60

ԸՆԾՆՈՒՄ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	 ՊԸ. ...	100
10 Ֆրանքոն	 » ...	87 34
Անգլիական ոսկի	 » ...	110 25
Բոլ Իմպերիալ	 » ...	90 43
Քրիմից	 » ...	54 45
Ռուսկի թղթադրամ	 » ...	8 95
» արծաթ	 » ...	89 30
Ֆիօրին	 » ...	9
Մէճ. արծ. (տարբ.)	 » ...	408 2
Վէջնոց	 » ...	402 35
Հինգնոց	 » ...	402 30

Մէթալիք	 » ...	98 20
Պղինձ	 » ...	—
Թղթադրամ	 » ...	—

ԵՐԵՎԱՆԻ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 9 Յուլիս, ժամ 5 վայր. 45 երեկոյ

Անգլ. քօնսոլիտէ		99 7/8
Օսմ. » Սէրի Դ. Բացուեցաւ		46 3/8
» » » Գոցուեցաւ		46 7/16
» » » Ա.		32
» » » Բ.		48 1/8
» » » Գ.		46 3/8
Օթօման 1871		68 1/2
Փոխառութիւն 1877		81 1/2
Պանք Օթօման	 Գոլըն Կարած	44
Ռուսական փոխառ. 1873		93
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)		65 3/8
» առանձն. (Երեկեթիէ)		86 7/8
Տայրա Սանիէ		62 1/2
Տօմանիալ (փոխառ. Բօչիլա)		84 1/4
Հունգարական պարտաթուղթ 40/0		—
Փոխանակութիւն Բարիլի վրայ		—

Վիէննա, 9 Յուլիս, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ		424 80
Օսմանեան երկաթուղի		20 50
Բարիլ 9 Յուլիս, ժամ 3 վայր. 45 երեկոյ		
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0		440 35
» 3 0/0		84 40
Օսմանեան քօնսոլիտէ Սէրի Դ. Բացուեցաւ		46 45
» » » Գոցուեցաւ		46 60
» » Սէրի Բ.		47 75
» » Գ.		46 80 (°)
Օսմանեան երկաթուղի		42
» Բէթի Բաժնեթուղթ		—
Պանք Օթօման		528 75
Գրէտի Լիօնէ		535
» Ֆիսիէ		4324 37 1/2
Բաժնետոմս Լիօնի		4245
Սուէզի ջրանցք		2085
Ռուսական 5 0/0 1877 թ.		97 1/2
Իտալական Ռանթ		95 50
Եգիպտական միացեալ		329 37 1/2
Սպանիական (արտաքին)		58 1/2
Բրիտիւթէ Թիւրք.		392 50
50/0 Հիլլենական		323 75
2 Էք Լոնտրայի վրայ		25 48

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 ՐԴ ՏԱՐԻ

1885 ՅՈՒՆԻՍ 29

ԹԻԻ 3776

ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 29 ՅՈՒՆԻՍ

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

ՄԱՍԻՍԻ բաժանորդները թերթ 2 ՊԵՏԻ ՍՏԱՆԱՆ յառաջիկայ Օգոստոս 1 է վերջ եթե իրենց բաժանորդագիրը չ'իմութան հասցնել առ Տնօրէնութիւնն մինչեւ նոյն թուական :

ԱՅՆ ԲԱԺԱՆՈՐԴ որոց պայմանաժամը կը լրանայ Օգոստոս 1 ին, պարտին նորոգել զայն անյապազ, եթէ չ'են փափագիր որ թերթերու արաքումն ընդհատուի :

Տարեկան Բաժանորդագինն է

ԳԱՒԱՌԱՅ Համար, 69 դշ հանդերձ թղթատարութեան ծախիւք :

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ Համար, 15 Ֆրնք. նոյնպէս .

ՊՈԼՍՈՅ Համար. կէս Ոսկի Օսմ. առանց թղթատարութեան ծախուց :

Գաւառաց եւ Օտար երկիրներու համար վեցամսեայ բաժանորդագրութիւն չ'կայ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ.

Երկրորդ Հանրապետութեան ժամանակ մամուլը սանձարձակ ողորդութիւն գտաւ . ամէն կերպ օրինական պայմաններ ի բաց թողուեցան . լրագիրներու տարաքի մը կը տեղար փողոցները, բայց Ֆրանսացին չէր կրնար պարծենալ Բէռլին-Շէն, Ա. Գ. Գ. Շէն,

Գաւառեաց, Կէյովին և տգեղ անուններու ներքեւ սրիկայներու ընթերցման արժանի այդ օրագիրներով . բայց 1848ի հետաքրքրական մի նորութիւնն էին կին լրագրապետը կամ խմբագիրը . այսպէս՝ Էռնէստ Եռնէստ հրատարակեց La voix des femmes թերթը . ինչո՞ւ կ'ինն ալ չխառնէ, կ'ըսէր, իւր ձայնն ընդհանուր փառատրութեան մէջ, քանի որ ինքն է քաղաքացիներ եւ հայրեր տուողը : «Տէպիտէ Կէյ» Politique des Femmes օրագրին տնօրէն եղաւ : Ընկերավարութեան լայնատարր դրօշին ներքեւ կանանց քաղաքականութիւնը, կ'ըսէր, թող զուգընթանայ արանց քաղաքականութեան հետ : Ժանն Տէռուէն հատարակեց L'Opinion des Femmes օրագիրը ոյր նշանաբանն էր մեռնաշնորհներու խաղաղութիւն եւ կանանց ընդունելութիւն հանրային պաշտօններու մէջ : Ասոնց ետեւէն La République des Femmes պատերազմ հրատարակեց մօրուքին դէմ . ջարդենք, կ'ըսէր, մօրուքը, ջարդենք մօրուսաւորները :

Սակայն ընդհանուր կարծիքը չկրցաւ հանդուրժել ասոնց եւ «Գալլէնեաք» դօրապետի առաջին դործերէն մին ալ 11 լըրագիր Բէլ անցնելը եղաւ կ'ըսէ պատմիչը . այդ կոտորածի պահուն մասնաւոր խտութեան ենթարկեցաւ Բէլ լրագիրը . խմբագիրը Էմիլ տը Ժիւարտէն ձերբակալուելով բանտարկուեցաւ . «Կազէթ տը Ֆրանս» միապետական դաղդալարներ տարածելուն համար նմանապէս խաղաղութեան ուրիշ քանի մը թերթերու հետ :

Նրաշխաւորութեան դրութիւնը որ ջընջուեր էր, նորէն հաստատուեցաւ, միայն թէ փոխանակ 100 հազար Փռանքի, Փարիզի մէջ լրագիր հրատարակողը կը պարտաւորէր

այս անգամ 24 հազար ֆրանք դնել ի պահետի Պետական սնտուկի մը մէջ: «Ոսկի պէտք է, խօսելու իրաւունք ունենալու համար՝ շատ ոսկի, ըսած էր Լամոնէ, այդքան հարուստ չենք. աղքատները թող լուռ կենան ուրեմն» եւ այս քանի մը խօսքը տուածեց Լամոնէ վեցամսեայ բանտարկութեամբ եւ 3 հազար ֆրանքով:

* * *

Նաբօլէօն Գի ժամանակ շատ ընդդիմախօս թերթեր խախնուեցան. լրագրութիւնը կաշկանդեցաւ օրինական շղթաներով. 1833 տարւոյն վերջերն ամենօրեայ միայն 14 քաղաքական թերթեր մնացած էին(*). ուրիշ մի քանի թերթեր կրցան յետոյ հրատարակուիլ. ասոնք բաժանորդորակու համար տարօրինակ հնարներու կը դիմէին. օրինակի համար Etendard լրագիրը միամսեայ բաժանորդ գրուողին իրաւունք կուտար 28 տեսակ սպիտակ հանդերձեղինաց մէջէն ընտրել ձրիապէս 40 ֆրանք արժողութեամբ նիւթեր: Nouveau Commerceի բաժանորդները իրաւունք ունէին իրենց տրուած ընկալագիրը իբրեւ կանխիկ դրամ որոշեալ վաճառատուն մը տանելու եւ անկէ 6 ֆրանք արժողութեամբ ձրի ապրանք ստանալու. արդէն բաժանորդագրութիւնն ալ 6 ֆրանք ըլլալուն՝ այդ եղանակաւ իրենց վճարած գրամը ետ կը դարձուէր: Etincelle օրաթերթն որոյ մի թիւը 5 սանթիմ էր, ունէր իւր հետ տըպուէր զէլլաֆօնէ, bons de rabais, զորս ներկայացնելով լրագիրը գնողը մի քանի մանրավաճառներէ կրնար գնել հարկաւոր պարէններ 0% 5 զեղչով, ինչպէս գինի, դեղ, միս եւ: Այս տոմսերը տեսակ մը յանձնարարական էին գնողին ձեռքին մէջ. Գրամական եւ առեւտրական խնդիրներու վերայ կը գրէին այս թերթերը, եւ գրականութիւնն ալ կը շաղկէին: Ասոնցմէ ետքն ալ հրատարակեալ կարգ մը լրագիրներ կը շատանային լուրեր տալով, առանց վիճաբանելու քաղաքական խնդիրներու վրայ:

Փորրագիր օրագիրներու մէջ ամենէն

(*) Տեպլա, Բէտ, Սիէլ, Գօնթիթիւսիօնէլ, Բէյն, Բաթրի, Ասանպլէ. Նասիօնալ, Կապէթ տը Ֆրանս, Իւնիօն, Իւնիվէս, Էսթաֆէթ, Ժուռնալ տէ Ֆէ, Շառիլարի, Մօնիթէօն:

աւելի տարածուածն էր Petit Journal quotidien, որոյ իբրեւ հակապատկեր երեւցաւ Grand Journal. ասոր կտաւի վրայ տըպուած օրինակները անձեռոցի պէտք ունեցող բաժանորդներուն կը ցրուէին: Վիլմըսան, ասոր հրատարակիչը, 1835 ին հիմնեց Evénement լրագիրը, որն որ խախնուեցաւ աղքատներու նպաստաւոր մի յօդուածին պատճառաւ եւ 24 ժամ վերջն արձրկեց զՖիլաֆօն, ամէնուն գիտցած Ֆիկառօն, որուն ժողովրդականութենէ հրապուրեալ հրատարակուած են Gaulois, Paris Journal, Evénement եւ իւր նմանողները: 1860 ին հրատարակուեցաւ Թան: Ֆիկառօի կը վերագրուին մի քանի յառաջադիմութիւններ լրագրութեան մէջ, ինչպէս, թատերական ամենօրեայ ազդը, լրագիրներու վերայ զուարճալի ռճով տեսութիւն մը, եւ յետոյ Բանթիէնէրը: Այս թերթերը շատ վնաս տուին մեծ լրագիրներուն. ամէնքն ալ գլորեթէ կէսուակէս կորուսին իրենց բաժանորդները. Բաթրի որ 32 հազար բաժանորդ ունէր իջաւ 16 հազարի. Գօնթիթիւսի 24 հազարէն կորոյս 13 հազար. Բէտ 25 հազարէն 15 հազար, Օթիէն Նասիօնալ 18 հազարէն 15 հազար, Տեպլա 12 հազարէն 9 հազար. Սիէլ որ 55 հազար բաժանորդ ունէր իբրեւ միակ թերթ հանրապետական կորոյս 10 հազար բաժանորդ: 1866ի պաշտօնական տեղեկագիրներէ ըստուգուած է որ քաղաքական լրագիրները Փարիզի մէջ օրը 530 հազար թերթ կը տըպուէին: Միայն Մօնիթէօն, դրօշմի տուրքէ ազատ, 130 հազար կը տպէր: Ոչ-քաղաքական օրագիրներ կը տպուէին 800 հազար թերթ, միջին հաշուով: Ուրիշ գլորուածքէ մը հասկցուած է թէ 1858 ին 67 հազար թերթ կը տպէին կառավարական լրագիրներն, իսկ 75 հազար՝ ընդդիմադիր լրագիրները: 1867 ին այս թիւը 128 հազարի բարձրացաւ, իսկ առաջինն 42000ի իջաւ: Ընդդիմադիր կուսակցութիւնը շատ յառաջ գնացեր էին եւ հանրային կարծիքն արթնցած՝ աղքատապէս կը պահանջէր խղճատութեանց բարձումը: Նաբօլէօն Գ. տեղի տուաւ այս շարժումին եւ 1867 յունուար 19ի յայտարարութեամբ ծանոյց թէ Ֆրանսայի համար ազատութեան ժամն հնչեց եւ թէ բարենորոգութեանց մէջ կար նաեւ ա-

գլխավոր օրէնք մը Մամլոյ վրայ. և առանց սպասելու որ այդ օրէնքը խմբագրուի, Նաբօլէօն գլխովին ազատ թողուց լրագրութիւնը այն վայրկեանէն, եւ այդ թոյլատրութենէն յարութիւն տուաւ 80է ի վեր դադարած Ինկիլտ լրագիրը, Ֆէլաօն քաղաքական թերթի փոխուեցաւ եւ կարգ մ'ուրիշ թերթերու մէջ երեւցաւ Journal de Paris. Վերջապէս 1868 մայիս 11ի օրէնքով ամէն Ֆրանսացի ազատ էր լրագիր հրատարակելու առանց կանխակալ արտօնութեան, այսինքն ըստ Ժիրարտէնի լրագիր հիմնելով կործանելու ազատութիւն. եւ իրաւամբ, քանզի մեծախախ գործ մ'էր լրագրութիւնը այն ատեն եւ հրատարակել թերթերուն 4/5 ը հազիւ կրնային գոցել իրենց ծախքը: Ուստի եւ նոր լրագիրները առօրեայ կեանք մ'ունեցան: Ռօշֆօռ առաջիններէն մին կը համարուի որք օգտեցան մայիս 11ի օրէնքէն, զի նոյն ամսոյն 30ին իւր հոշակաւոր Լապտերը (Lanterne) վառեց, մինչեւ ցայն վայր ընդունայն արտօնութիւն խնդրեւէն ետեւ: Երկու մեծագիր լրագիրներ 1869ին երեւցան Le National եւ Le Peuple, որոնք 3 սանթիմ ծախուելու յանդգնութիւնն ունեցան. առաջնոյն տընօրէնն էր Ռուսէ, սեղանաւորներէ պաշտպանեալ թերթ մը. երկրորդը Նաբօլէօնի պաշտպանութեան ներքեւ կը կարծուէր, խմբագրութեամբ Գլէման Տիւվէնուայի:

Լրագիր մը շատ ծախքի կարօտ է, այլ որպէս զի հիմնուի եւ հաստատուի, հարկ կ'ըլլայ երկու միլիոններէ միոյն դիմել:

Ասոնցմէ մին է դրամագլուխը դանդաղաբար սպառել, եւ 3-4 տարուան մէջ պէտք եղած թուով բաժանորդներ գըտնելն. երկրորդն է առաջին տարին աչք առնուլ մեծկալ միասն մը եւ առաջին օրէն շատ ընթերցողներ ունենալ: Այս վերջին սկզբունքով ճամբայ ելած էին Public, Peuple, եւ National. 1869ին որոշած էին մէն մի թուոյ վրայ 6 սանթիմ կորսնցունել եւ ամէն օր 4-5 ֆրանք միասուն տուիլ:

Այս միջոցներուն երկուքն ալ ընտիր են, երկուքն ալ յոռի ըստ պարագայից, քանզի կրնան կործանել կամ հարստացունել հրատարակիչները: Յանդուգն ձեռնարկ մ'ալ եղաւ Histoire անուամբ կրկին լրագրի մը հրատարակութիւնը որ 8 էջ եւ 48 սիւնով

մեծագիր թերթ մ'էր, կէսը Ֆիկաուօ եւ Կօլուաի կէսն ալ Սիէլ եւ Տէպաի ուժով, բայց սովորական լրագրի մը դնով: Այս փորձերը յաջող ելք մը չէին կրցած ունենալ. բայց եւ այնպէս Ֆրանսայի մէջ 69ին 2000էն աւելի թերթ կը հրատարակուէր ամէն օր:

Նաբօլէօնի պաշտօնեայք կը գանգատէին մամլոյ շնորհուած տարապայման թոյլտուութենէն. բայց այս ազատ կայսրութեան փորձերը կէս ճամբան մնացին եւ տեսնուեցան 1870ի մեծ դէպքերը:

* * *

Վերջին կայսրութեան անկումէն ետքը, 4 սեպտ. 1870, մամուլը արձակուած էր ամէն կապանքէ. Ֆրանսայի դժբաղդ օրերուն մէջ երեւցող նոր թերթերը հարիւրէն պակաս չէին, բայց կենսականութենէ զուրկ սովի ծնունդներ, որոնք ամէն չափով եւ ամէն գոյնով թղթերու վրայ կը ապուէին: Այդ ժամանակին մի նշանն էր Lettre-Journalը. նամակի թղթի վրայ տպուած, չաբաթը երեք անգամ կ'երեւէր եւ կը պարունակէր Փարիզի եւ գաւառներու միջեւ փոխանակուած օգային թղթակցութիւնները պաշարման ատեն:

Այս դիրքով կը հրատարակուէին նաեւ Journaux-Ballons, Ballons-Postes, եւ Mongolfières. գաւառներու համար ալ ասոնց լուսավիմատիպ մանրալիտական տղազրութիւնները հնարեցին:

Թիէռի կառավարութիւնը թէեւ մամլոյ ազատութիւնը յարգել յայտարարած էր, այլ տեսնելով որ Փարիզի մէջ անհնար էր չափաւորել այն թերթերն որք յայտ եւ համարձակ ներքին պատերազմ կը քարոզէին, եւ Բրուսիացւոյ ալ պինուորական դործոց վրայ տեղեկութիւններ կուտային, սլարտաւորեցաւ դադրեցունել զանոնք:

Գօմիւնն ալ իրեն անխորժ երեւցածները խափանեց, եւ իրմէ հալածուող թերթերը քաղքէն դուրս սկսան գաղթել:

Ազգային ժողովը անխորժ ամէն քաղաքական թերթի համար ինչպէս նաեւ շաբաթը մէկ անգամէն աւելի երեւցող պարբերականներու համար երաշխաւորութեան դրութիւնը հաստատեց (6 յուլիս 1871): Գրոշմի տուրքը չվերահաստատեց, բայց լրա-

գիրքներու սպառած թղթին մէն մի 100 հազարակրամին վրայ 20 ֆրանք տուրք մը եւ թղթագործութեան վրայ նոյնպէս 100 հազարակրամի համար 10 ֆրանք տուրք մը հաստատեց: Մամուլ օրինազանցութիւնները 48 եւ 49 տարիներու օրէնքներուն ենթարկեց. գլխաւոր բանն էր մամուլ ժողովրդականութիւնը ապահովել, 5 սանթիմի լրագիր ծախել եւ ասոր համար պէտք կ'ըլլար դրոշմի տուրքը ջնջել, եւ սպասել կատարելագործեալ մեքենաներու եւ այն մեքենայ մամուլներուն ուր կրնան շրջաբերութեան դնել փոքր թերթի 600 հազար օրինակները ամէն օր, որք ձեռքէ ծախուին, եւ այսպէս դիւրամատչելի դնով մը դո՛ւ ընել ժողովրդոց այն անբացատրելի պէտքն որով օրագրի մը մէջ կ'որոնեն սրտաթունդ իրենց երազներուն իրագործման հնար մը, իրենց իղձերուն խրախոյս մը:

*
* *

Յրանալի մէջ 1880ին հրատարակուած պարբերականներուն թիւը 2500 ի կը հաշուէին, միայն Փարիզ այս թուոյն կիսով չափ թերթեր կ'ենէին. 155 հատը առեւտրական եւ դրամական խնդրոց վրայ կը գրէին, 159 հատը զբօսական ընթերցումներու յատուկ էին, 154 զանազան արուեստներու կը վերաբերէին, 104 օրէնք եւ վարչութեան, 90 գրական, բանասիրական, կենսագրական, 80 բժշկական, դեղագործական, 71 կրօնական, 70 նորութեանց, 48 գիտութեանց, 38 երկրագործական, 29 զինուորական, 23 աշխարհագրական-պատմական, 23 խաղերու, 18 գեղարուեստից, 17 թատրոններու, 13 նուագածութեան, 7 ճարտարապետութեան, 4 լուսանկարի. ամենօրեայ քաղաքականներն էին 50, որոցմէ 10 փոքրագիր. քաղաքական հանդէսներն էին 21 հատ: Այս թիւերը մէկ օրէն միւսը կը փոխուին եւ եթէ այսօրուան թիւն ալ գիտնայինք, վաղը նորէն պէտք պիտի ըլլար սրբագրել:

Լրագիրներու ձեռքէ վաճառումը շատ նկատմամբ օգտակար է. նախ առօրեայ հասոյթ մը կ'ունենայ հրատարակիչն եւ եթէ նոր թերթ մ'է որ կը հրատարակուի՝ ժողովուրդը շուտով կը տեսնէ եւ կը ճանչէ զայն: Փողոցներու մէջ եթէ լրագրի վաճառումն

արդիւուէր, րագիրները չէին կրնար երկարակեաց ըլլալ: Երբեմն Փարիզի եւ շրջակայից լրագրավաճառներու թիւն էր 3000, չնայելով որ ամէն փողոցի մէջ գոնէ խանութ մը կայ լրագիր վաճառող. իսկ մեծ պողոտայներու վրայ անոնց վաճառմանը յատուկ «քէօշկեր» շինուած են. ասոնց ամէնն ալ Փարիզի քաղաքապետութիւնը վարձած է ընկերութեան մը. մի քէօշքի վարձքն է 750 ֆրանք. վարձակաները լաւ կը շահին այս գործէն, որովհետեւ երեսը կը վարձեն ցերեկեայ եւ գիշերային ծանուցումներու. մէն մի ծանուցման համար ըստ տեղւոյն եւ փողոցին կարեւորութեան 5 էն մինչեւ 30 ֆրանք ամսական կ'ստանան:

Լրագիրներու ձեռքէ վաճառումը մահաւանդ շահաւոր եղած է 5 սանթիմի մոց թերթերուն. Petit-Journal աշխարհիս ամենէն աւելի տպուած լրագիրն է, հատին վրայ 1 սանթիմ շահ կը թողու. մի սանթիմ բայց ամէն օր 650 հազար օրինակի վրայ պատկառելի դումար մը կը ձեւանայ, եւ ամէն տարի զուտ շահ 2½ միլիոն ֆրանք, առանց հաշուելու ծանուցումներու հասոյթը: Յրանալիս այս փոքր թերթը քաղաքական մեծագոյն զօրութիւններէն մին համարուած է եւ 25 միլիոն ֆրանք կ'արժէ:

Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԴՐԱՄԱԳՆՈՒԽ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Բարոյ չոր Խօսեցաւ Տոքթ. Թա. Դէճ
Ժայէտէ 3էն, Կերպէ առաւօր

«Չամենայն դոր ինչ կամեցիք
թէ արասցեն ձեզ մարդիկ, արա-
րէք եւ դուք նոցա այնպէս»:
(Մատթ. Է. 42):

(Շար. և վերջ)

ՆԻՒ-ԵՈՐԻ, 6 Յունիս, 1885

Աշխարհի մեծ պէտքն այսօր է կատարումն Գրիստոսեան այս մեծ պատուէրին, զոր նա տուաւ իւր քարոյին մէջ 2իթենեաց լերան վրայ: Երկնից կամարին ներքեւ քաղաքական տնտեսութեան վարդապետք,

եթէ հազար տարի ի ժողով դուռնարին, չեն կրնար լուծել այս վէճն ի մէջ մենավաճառութեան եւ ծանր գործոց, ի մէջ Գրամագլխոյ եւ Աշխատութեան: Ամերիկայի Յեղափոխութեան սպառնալիցն ատեն ծանր հեծանի կտոր մը վեր պիտի վերցուէր, թեւեւ ամբողջ մը համար, եւ տասնապետ մը վերատեսչութիւն կ'ընէր գործին, եւ հրաման կուտար զինուորաց մինչ նորա հեծանը կը վերցունէին: «Ասդիէն վերցուցէք, օն վերցուցէք» կը գոչէր: Բայց հեծանը կարի ծանր էր, զինուորը չէին կրնար վերցունել: Անտի կ'անցնէր հեծեալ ոմն որ կանգ առաւ եւ ըսաւ տասնապետին. «Ինչո՞ւ դուն չես օգներ անոնց հեծանը վերցունելու»: «Ոչ», ըսաւ, «ես չեմ վերցունել. ես տասնապետ եմ»: Հեծեալը վար իջաւ ձիէն, եւ զինուորաց քով դառնալ ըսաւ. «Արդ, ամէնքս մէկէն վերցունենք, օ՛ն վերցունենք», եւ հեծանը դրուեցաւ տեղը: Ազնիւ հեծեալը խօսքն ուղղելով տասնապետին՝ ըսաւ. «Երբ կը տեսնես որ հեծան մը այնչափ ծանր է որ մարդիկդ չեն կրնար վեր վերցունել, եւ դուն չես ուզեր օգնել անոնց, լուր դրկէ ընդհանուր հրամանատարիդ»: Վաշինգթոն էր որ այսպէս խօսեցաւ: Այս է Աւետարանը զոր ես գիտեմ. Աւետարան վեր վերցունելու մէկը, վեր հանելու ոմն ի խաւարէ, բարձրացնելու երկրէ յերկինս: Այս է Աւետարանը զոր ես գիտեմ, Աւետարան օգնելու մէկու մը վեր, վեր ամբառնալ. «Ո՛հ» կ'ըսէ Խելացի ոմն, «խօսէ ինչպէս որ կ'ուզես, Պահանջի եւ Ընծայումի օրէնքը պիտի կարգադրէ այս բաները մինչեւ ցվախճան ժամանակի»: Ոչ. այնպէս պիտի չըլլայ, եթէ ոչ Աստուած մեռնի, Դատաստանի աւուր մարտկոցները գամուին, եւ Պրուտն եւ Պրոգրպին, ըստորերկրեայ պետութեանց թագաւորն եւ թագուհին, բոլորովին տիրեն այս աշխարհի: Գիտէ՞ք ով են Պահանջ եւ Ընծայում. անոնք իրարու ընկեր եղած են, եւ կը խորհին նենգել եւ խարդաւանել զաշխարհ. եւ արդէն կը խարդաւանեն ու կը խաբեն: Ընկըմը վրայ էր: Ընծայում եւ Պահանջ կը կենան ծովեզերքը, մին փրկութեան նաւակին մէկ կողմն, եւ միւսը միւսը կողմը, եւ կը գոչեն առ ձեզ. «Տալու էք մեզ ինչ որ կը պահանջենք զձեզ ծովեզրը հա-

նելու համար, կամ յատակն երթալու էք»: Եթէ կրնաք լիով առնուլ 5,000 թալէր, կրնաք պահել զձեզ սնանկութենէ: Ընծայում եւ Պահանջ կ'ըսեն. «Տալու էք մեզ ծանր վաշխ, կամ սնանկանալու էք»: Այս Ընծայումի եւ Պահանջի աւազակային ընկերութիւնը կ'ըսէ ձեզ. «Հունձքը քիչ է այս տարի: Գնենք բոլոր ցորենը եւ լեցունենք մեր շտեմարանը: Արդ, տուէք մեր պահանջած դինը, կամ քաղցէ մեռէք»: Այդ է ձեր փառաւոր օրէնքն Ընծայումի եւ Պահանջի:

Աշխարհի վրայ մեծագոյն ջաղացքին տէրերն են Ընծայում եւ Պահանջ, եւ բոլոր գետերը կը դարձունեն անոնց ջաղացքին անիւները, եւ ջաղացքին քարերուն բերանը կը դնեն բոլոր այրերը, կիներն եւ մանուկները զորս կրնան քերել բերել, եւ անոնց արիւնն եւ ոսկրները կարմիր կը ներկեն հովիտը մինչ ջաղացքը կ'աղայ: Ընծայումի եւ Պահանջի այդ սատանայական օրէնքը դեռ ի բաց պիտի թողուի, եւ անոր տեղը պիտի դայ օրէնք սիրոյ, օրէնք դորձակցութեան, օրէնք քաղցրութեան եւ մարդասիրութեան, օրէնք համակրութեան, ՕՐԷՆՔՔՐԻՍՏՈՍԻ:

Գաղափար չունի՞ք այսպիսի ժամանակի մը գալստեան վրայ: Ուրեմն չէք հաւատար Սուրբ գրոյ: Բոլոր Սուրբ գիրք լի են խոստումներով այս նիւթին վրայ, եւ ցորձափ դարերը կը հոլովին, ժամանակ պիտի դայ որ ստացուածոց տէր մարդիկ յօժար պիտի ըլլան տալու աւելի մեծ դուռնարներ մարդասիրական նպատակներու, եւ աւելի շատ պիտի ըլլան ձէյմա Լընոքսներ, Բիդէր Գուբըրներ, Ուլիսամ Տօճեր եւ Ջօրձ Բիպօտիներ: Մինչ կուգայ այն ատենը, աւելի շատ պիտի ըլլան հասարակաց քաղեր, աւելի շատ պիտի ըլլան գեղեցիկ սպառնակներու թանգարաններ եւ աւելի շատ պիտի ըլլան պարտէզներ որ բաց պիտի թողուն ժողովրդեան եւ գործաւոր դասերուն . . . :

Կուգայ ժամանակն երբ, եթէ ունիք ձեր տան մէջ տեսնելու արժանի բան, — սպառնալիքներ, արձաններ — պիտի հրաւիրէք զիս գալ զանոնք տեսնելու, եւ պիտի ըսէք. «Տե՛ս, ի՛նչպիսի պարզեւոր օրհնած է զիս Աստուած, եւ վայելելու համար քոյդ ալ է: Այդ է Աւետարանը»:

Շատ տարիներ առաջ Ալէկսանի լեռներէն անցնելու տունն կառքը կեցաւ, եւ Հէնրի Գլէյ կառքէն վար իջնելով դնաց սարաւանդին ծայրը ժայռի մը վրայ, եւ հոն կեցաւ իւր վերարկուն վրան առած, եւ կը թուէր ունին դնել բանի մը: Մէկը հարցուց անոր. « Ի՞նչ բանի ունին կը դնես »: Հէնրի Գլէյ հոն լերան կատարը կենալով ըսաւ. « Ունին կը դնեմ այս երկրին հանդերձեալ միլիոնաւոր բնակչաց ոտից դրողման »: Ամերիկացի քաղաքագէտի մը համար վեմ դիրք եւ կեցուածք: Դուք եւ նա այսօր կը կենանք արտօնութեան լերան դադարձ, եւ Դարուց Վիմին վրայ, եւ կը նայինք հեռուն, եւ կը լսենք ապագային մէջ գալն երջանիկ արուեստից, զուարթացող ժողովրդից, նուիրեալ հարստութեանց եւ վախճանին մօտեցած իննեւտասներորդ դարուն եւ ծագելու մօտեցած քսաներորդ դարուն անհամար բարգաւաճանաց եւ յաջողութեանց:

Այս առաւօտ մինչ եւ հոս կը խօսիմ, անդին վեհաշուք կերպով կը կենայ Գաղիոյ հանդուցեալ հեղինակն եւ հայրենասէրը:

Վ Ի Ք Թ Օ Ր Հ Ի Ի Կ Օ

Տասը հազար թալէրը զոր հանգուցեալը կը տակաւ թողըց Բարիլ Գաղաքին աղքատաց համար, թեթեւ նշան մ'է միայն այն գործին զոր նա կատարեց բոլոր աղքաց եւ բոլոր ժամանակաց համար: Չեմ դարմանար որ անոր հայրենակիցը անոր մահուան եւ թաղման մէջտեղ տասնեւմէկ օր կը թողուն անցնիլ, վասն զի աշխարհ գոռաբաւ կըրնայ թողուլ որ երթայ այս մարդն, որ աւելի քան ութ տասնեակ օրհնեց զաշխարհ իւր աննման հանձարով: Անոր անունը սոսկուն պիտի ըլլայ բոլոր բռնապետաց, եւ քաջալերութիւն բոլոր... ճգնողներու: Նա ըրաւ աշխարհի բեռը թեթեւագոյն, խաւարը նուաղ թանձր, չլթայն նուաղ ճնշող եւ նեղող, եւ անիրաւութեան գահերը նըւաղ ապահով: Երթաւ բարեաւ, հայրենասէրը, հանձար դարուս, Վիքթոր Հիւկո: Բայց մարդկութեան բարձրագոյն բարեկամը Վիքթոր Հիւկո չէր: Մեծագոյն բարեկամը Դրամատերին եւ Աշխատողին, եւ նա որ պիտի բերէ զանոնք ի կատարեալ միութիւն եւ համաձայնութիւն, ծնաւ Մըն-

դեան գիշեր մը մինչ երկնից վարագոյրները կը ճօճէին հրեշտակային թեւերով երերեալ: ... Դրամատէր անհունութեան, եկաւ մտաւ ի մեր պայման: Եկաւ մեր աշխարհը, ոչ պալատի դռնէ, այլ մարագի դռնէ: Իւր առաջին գիշերն անցուց հովուաց մէջտեղ: Իւր շուրջը ժողովեց ձկնորսներ իւր հետեւողներն ըլլալու: Հիւսան մը խանութին մէջ ուրազով, սղոցով եւ տապարով աշխատեցաւ ցուցնելու թէ ինք եղբայր է արուեստաւորաց: Տէր ամենայնի, բայց եւ այնպէս օր մը Երուսաղէմի մէկ բըլուրին վրայ այլոց համար հրաժարեցաւ ամէն բանէ, սիկղ մ' անդամ չապահեց իւր թաղման ծախուց համար, ուրիշին ողորդորմութեամբ թաղուեցաւ յարաւարձանս քաղաքի մը որ մերժած էր զնա: Այսպիսի Դրամատէրի մը եւ այսպիսի հիւսան մը խաչին առջեւ ամէնքը կրնան իրարու ձեռք թոթուել եւ երկիրպագանել: Ահա հոս է Քրիստոսն ամէն մարդու: Չկայ բարձր մէկն որմէ աւելի բարձր չըլլայ Քրիստոս: Չկայ աղքատ մէկն որմէ աւելի աղքատ չըլլայ Քրիստոս: Անոր ոտից առջեւ կրնան հրաժարիլ հակառակութիւններէ իրարու թըլնամի ծայրեր, եւ դէմքեր, որ դարերու նախապաշարունմներով եւ վրէժխնդրութեամբ կարմրեցած էին, պիտի փայլին երկնից ժպիտով երբ նա կը հրամայէ. « Զամենայն զոր ինչ կամիցիք թէ արասցեն ձեզ մարդիկ, արարէք եւ դուք նոցա այնպէս »:

ԵԱՆՔԻՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ՆՇՆԱՐՆԵՐ

Գեր. Գ. Վ. Արուստեանց հետեւեալ տեղեկագրութիւնը գտած է Տիւրքիկ մէջ եւ մեզ զրկած է ի հրատարակութիւն: Եւ հրատարակենք զայն աւելի բանասիրաց ճաշակ մը տալու համար այդ ժամանակներու դրական ոճի մասին, քան իւր ընծայած պատմական կարեւորութեան համար:

Ի թիւն Հայոց ՌՃՇԷ 1187 ամին ի փետր. ամսոյն յաւուր միոջ ծնեալ եմ ես տառապեալ Յակոբս ի յարգանդէ մօր իմոյ. հայրն իմ եւ մայր սնուցեալ զիս ուրախութեամբ

մինչև ամս չորիս, յետ այնորիկ բարկութիւն հասեալ յԱստուծոյ մահ սաստիկ անկաւ ի քաղաքիս մերում. յամառն յուրիս ամսոյ մէջն հայր իմ վախճանեալ եւ մայրն իմ ասլրեալ ի վերայ նորա սըգով յետ եօթն աւուր նա եւս մեռեալ, ի ժամանակի երիտասարդութեան իւրեանց, եւ քոյրն իմ մեռեալ, եւ մանուկ տղայ. մինչ լրանալ ամսոյն, չորս մեռեալ ել ի դրանէ մերմէ, որ ինձ երազի պէս թուի վասն տղայութեան իմոյ: Շատ երիտասարդ եւ չատ մանուկ տղայ մեռեալ, որ զուգ եւ զտրտմութիւն քրիստոնէից եւ այլազնեաց մարդ ոչ կարէ պատմել, եւս առաւել մեծ նէնէին մերոյ անցուցեալ զգլուխ իւր մազեղէն չուն, անկեալ ի մէջ միւսրոյ եւ թաւալէր ի նմին, վասն զաւակի իւրում անմխիթար լայր եւ կոծէր զկուրծս. որքան կենդանի էր ցաւօք եւ հեծութեամբ անցուցեալ զաւուրս իւր, որ ոչ գտեալ զհնարս, յետ այնորիկ պահեաց զմեզ վասն մխիթարութեան որդւոցն իւրոց. եւ տուեալ զիս յուսումն գրոց ծառայել վարժապետութեան, ի ձեռն մահադէսի Անտօնի որդի տիրացու Յարութիւնի մինչեւ երեք տարի, եւ ամենաբարին Աստուած պարգեւեաց ինձ նշոյլ անհուն ողորմութեամբն, ի չափահասակ եղեալ զուսումն Սուրբ գրոց ձանաչել եւ ընթեռնուլ, եւ նախնիքն մեր պատմէին մեզ անցեալ յառաջագոյն բազում ժամանակաց եղեալ զիրան, եւ զվայելչութիւն քաղաքիս, որ զինք լուեալ ի նախնեաց իւրեանց պատմէին մեզ անցեալ զաշնս այս:

Եւ այս է Դաշն անցեալ բազում ժամանակաց.

Զի նստեալ ի քաղաքի մերում Շահ, որ անուամբն ասի Ահմէտի Շահ, զի շէն եղեալ է յայնմ ժամանակի ի քաղաքս եւ ի գլուղըս, եւ նստեալ կէօմրիւքճի ի չորս կողմ քաղաքիս, պահեալ զտիւ եւ զգիշեր, զի եկեալ յայլում երկրէ չատ մէթահ վասն անհուն մարդկանց, եւ առեալ նոցա զբաժինս իւրեանց, որ խաներն կայ ի բոլոր քաղաքին քայքայեալ մինչ ցայժմ ժամանակ, եւ խաչապալատ քրիստոնէից ազգին բազումք են եղեալ, եկեղեցիք նոցա կայ աւերակ աստ անդ, որ զի յանգեալ է այժմուս տեղիս տեղիս, եւ որ կայ ի դէպ յարեւելս,

անուամբ կառուցեալ Ս. Աստուածածնայ հանդեալ եկեղեցի եւ ունի բարձրագոյն ի ջուր հայեաց փոքրագոյն բերդ մի, եւ զնա շինեալ են վասն թագաւորաց պատերազմաց, եւ որ կայ ի դէմ նորա փոքրապարիսպս որ այժմիս կոչի զալէկ, ի մէջ նորա նստեալ բազում մարդիկ որպէս խմբէթ, զի յոյժ գեղեցիկ եղեալ է վայելչութիւն եւ զինութիւն, նմանեալ զետ մայրաքաղաք, որ եւ այս դաշն անցեալ անթիւ ժամանակաց եւ հասեալ նախնեաց մերոց. սակաւ տընւընուն այսր եւ անդ տեղիս քայքայեալ, եւ որ կոչեն մարդիկ այժմուս զանուն նորա Նաշկացի, զի տուն եղեալ է քրիստոնէից ազգին, որ մինչեւ երթայ ելանէ ի Տիպլէ խանն, աստուստ եւ անդուստ շէն եղեալ է, երկու կողմանց: Պատճառ վասն աւերման քաղաքին եւ անցեալ իւրեանց նեղութեան ժամանակին, կրկինս պատմէին մեզ զեղեալ իրան, որ զի ժողովեալ մեծամեծ հայ իշխանք քաղաքին խորհուրդ արարին ի հետ այլազգի զապիթներուն որ զինք զպարտան քաղաքին աւելի արարեալ եւ առնեալ նոցա կերեալ եւ ոչ ողորմեալ ի վերայ աղքատաց, այլ զրկելով զհոգիս վասն չարութեանց, եւ մինն ի միջոյ իշխանաց նոցա քրիստոնէայ իրաւախօս եւ արդարադատ, որ անուամբն կոչի Զալլա օղլու Յարիկ, որ բազում նեղութիւնս եւ չարչարանս կրեալ վասն աղքատաց քաղաքին, եւ վասն վարձուց եւ բարի գործոց, բազում խռովութեամբ իշխող եղեալ զպարտան հաչուէր զի գիտէր յառաջագոյն զխորհուրդս նոցա ի հետ միմեանց, եւ չար իշխաններն ժողովեալ եւ չար խորհուրդ խորհեալ վասն քրիստոնէին այն, եւ եղեալ ի վերայ նորա չար միտս եւ մատնեալ ի զապիթ քաղաքին (Տիւրիկոյ) եւ արկեալ ի բանտ զեղբարն իւրեանց, յետ նորա տուեալ զապիթներուն բազում գանձս, վասն սպանանելոյ այրն այն, յիմարութեամբ չարեալ, ոչ ընտրելով զգատաստանն Աստուծոյ, կամայ եւ ակամայ առեալ ի ձեռաց զապիթին եւ հանեալ ի դուռ նորա եւ ձեռօք իւրեանց մարթեցին զեղբայրն իւրեանց, որպէս չար կայէն. եւ յետ նորա խռովութիւն արարեալ բազում, որ մինչ իմացեալ Աբաստիոյ փաշայն եւ բազում զօրք արձակեալ վասն խռովութեան քաղա-

քին, եւ նոցա ոչ գտեալ զհնարս զի սլարտը քաղաքին չատացեալ եւ եղեալ հարիւր քէսէ կէ, եւ իւրեանց այլ ոչ գտեալ հանգիստս վասն հատուցանելոյ զսլարտսն, ոմանք պահեալ ի բանտ եւ ոմանք ծախեալ զամենայն ինչս եւ տուեալ սակաւ ինչ, եւ բազում ոմանք թողեալ զտունս եւ զմիւլքս եւ այգիս, փախեալ յաստ եւ անդ, որ մինչեւ գտեալ զհանգիստս իւրեանց. եւ զապիթ քաղաքին առեալ զամենայն ինչս նոցա վասն հատուցման հարիւր քէսէին, քայքայեալ բազում տունս նոցա, եւ յայժմուս այս հողադորձքն սերմանեն ցորեան ի յօթեւանս նոցա, եւ այս դաշքն անցեալ ի թագաւորութիւն Սուլթան Ահմէտի եւ զապիթ քաղաքին Հաճի Վէլի, ի նախնեաց մերոց ժամանակին, եւ մեր հասեալ ի նեղութիւն ժամանակս այս:

Ի թուին Հայոց ՌՄԸ, 1208, ի դարնան ամենաստեղծն Աստուած սաստիկ բարկացաւ ի վերայ քաղաքին, եւ անկեալ սով սըղութեան որ մինչ ցորենին քիւէ 30 զէ ելաւ, զի քաղաքն ամենայն, եթէ այլադգ եւ եթէ քրիստոնեայ, թէ այր թէ կին, անկեալ ի լերինս բանջարով եւ ուրիշ անուշահամ խոտով շատանային. չորացեալ եւ անպտուղ մկյառնն որ կայ մինչ ցայժմ, նոյն տարին հրամանաւն Աստուծոյ, զարդարեալ կարմիր ծաղիօք եւ այլ զանազան անուշահամ խոտով, որ բազում մարդիկ նովաւ մխիթարէին. վասն յոյժ սաստիկ սովոյն հացագործքն ոչ գործեն զհաց, զի ոչ գոյր ցորեան. ողորմութեամբն Աստուծոյ նոյն ժամանակին եկեալ յայլ երկրէ սակաւ խոշոր կորեկ, զի, յայժմուս կոչի իւրեւ իւրեւ, զնա առնէին հացագործքն եւ խառնէին միսիւր ընդ իւրար, եւ տային փոքրածակէ ի դուրս վասն ամբոխին մարդկանց. զի ով որ հանձարեղութեամբ խէր, նորա էր, եւ մեր ազգին բնաւ ոչ տային, եւս առաւել խէին ի ձեռաց նոցա: Բազում մարդիկ երթային մինչեւ ցերեկոյ պահէին, ոչ կարէին սակաւ հաց առնէին, ոմանք սովամահ մեռանէին. եւ շատեր պարտական եղեալ եւ բազում ոմանք զնացեալ յօտար երկիր հեռի, եւ վասն խեղճութեան քաղաքին չըրջէին տնէ տուն հացագործքն գտանելոյ զցորեանն, եւ զալուրս բռնութեամբ առեալ տանէին: Բոլոր տարի մի քոյսպէս խեղճ

եւ ողորմելի եղեալ, ի նոյն տարւոյ եկեալ մեծ տէտէս Պոլիսու զնաց քառասուն զէ քիւէ մը ցորեն զնեց եւ պահեց մեզ սովամահէն: Յետ այնորիկ ողորմեցաւ ամենափրկիչն Աստուած իւր անհուն առատ ողորմութեամբ, որ զի շուտով իջաւ լիութիւն որ մինչեւ ցորենին քիւէն 3 զէ իջաւ: Թագաւորութիւն Սուլթան Օսմանին, և զապիթ քաղաքին մեր Հաճի Վէլի, եւ խարճն քաղաքին էր սակաւ:

ՌՄԹ, 1209, տարւոյն խաղաղութիւն չէն ի քաղաքիս եւ ի գիւղօրայս լցեալ ամենայն բարութեամբ, ի առեւտուրս կատարեալ առատապէս, եւ ձմեռն եղեւ հանդարտ եւ ի դարնան յապրիլ ամսոյ առաւրտն Նոր կիրակիի, ի լոյս հանեալ առաւօտուն, մէկ ժամ ձիւն եկաւ յերկնից սաստիկ, եւ բազում նստեալ ի վերայ երկրի, եւ մեծ մարդկանցն զարմացեալ եւ չափեալ մինչեւ կանգուն մի. ասէին թէ ոչ տեսաք այսպիսի իրք, վասն այն ծաղկեալ եւ զարդարեալ էր պտղաբերեալ ծառերն ի վերայ երկրի, զանազան ծաղիօք եւ անուշահամ հոտով, վասն սաստիկ բարկութեան ցրտոյն թափեալ, վասն այնորիկ եւ պտուղն եղեւ սակաւ: Նոյն տարին ըմբռնեալ անօրէն եւ թշնամի չարանուամբ ճըվիկ օղլին, որ հակառակ էր ի հետ քաղաքին եւ ունէր բազում զօրս, եւ այլազգիքն պատերազմեալ եւ բերեալ անօրէնն եւ դրեալ ի զնտան, եւ նա արուեստագործ որպէս սատանայ կտրեալ զերկաթ պատուհանին, որ կայ մինչեւ ցայսօր բարձրագոյն տեղիս ի սլարիսպն բերդին, անկեալ վերէն մինչեւ ի վայր եւ փախեալ, նոյն ժամուն որոտուին եղեալ վասն նորա. բազում մարդիկ զնացեալ զհետ նորա եւ ոչ ըմբռնեալ, եւ խուլութիւն եղեալ այլազգաց զհետ միմեանց, վասն փախչելոյ նորա. եւ ի նոյն տարին շինեցին զխան որ կայ ի գլուխ չարչուին որ այժմուս ասի Նուր խան: Թագաւորութիւն Սուլթան Օսմանին, եւ զապիթ քաղաքին մեր Հաճի Վէլին, եւ ցորենին քիւէն 4 զէ, եւ բամբակին օխան 20 փոյ, եւ եղին օխան 12 փոյ, եւ պանիրին օխան 4 փոյ:

ՌՄՃԺ (1210) ամին լիութիւն եւ առատութիւն. Սուլթան Օսման մեռեալ եւ Սուլթան Մուսթաֆայ ի թախան նստեալ. եւ խապարն տարածեալ յողորմս տիեզերաց,

ուրախութիւն եղեւ ամենայն երկիր, եւ ի գարնան սակաւ չար թշնամի եւ կողոպտիչ կար, եւ թագաւորն իմացեալ հրամայեաց հրովարտակօր յամենայն գաւառս իւր, թէ ուր ուրեք զտանիցի կողոպտիչ, կորուսցեն զանուն նոցա չար սատակութեամբ, եւ ի նոյն ամառն եկեալ սակաւ թշնամի ի մեր քաղաքն, եւ զապիթ քաղաքին ըմբռնեալ զնոսա եւ լցեալ ի մէջ գարբիներուն խառնութիւն վասն սպանման նոցա, եւ նոքա յախեան յաստ եւ անդ. ոչ որ կարաց հենարս գտանել եւ խեղդեցին եւ լցին ի մէջ ձորին. եւ նոյն ամառն անձրեւ եկեալ բազում անգամ, ջուրն տարեալ զանօրինաց էջերն կորոյս. և ի նոյն ամառն ելեալ երկրէ բազում եւ անթիւ մանր պէօճէք շրջէին ի վերայ երկրի որպէս միջուն ամենայն տեղիս, կեցեալ գերիս ամիսս եւ բնաջինջ եղեալ: Եւ ի նմին տարւոյ սերմանեալն ցորեանն բազում ի հնձոց ժամանակին լիութիւն եղեւ, որ քիւլն 4 զլ տային, եւ նոյն ամառն եկեալ ի մայրաքաղաքէ արուեստագործ ճանբազ, գլղղումն եղեւ քաղաքն ամենայն, եւ նոքա պէս պէս արհեստեօք եւ զարմանալեօք խաղային և շրջէին ի վերայ պարանին: Թագաւորութիւն Սուլթան Մուսթաֆային, եւ զապիթ քաղաքին մեր նոյն տարին փոխարկեալ եւ եղեալ Հաճի Օսման. եւ խարճ քաղաքին էր սակաւ. եւ ամենայն բարեաց լիութիւն եւ շէն ի քաղաքս եւ ի գիւղս:

ՌՄԺԱ. (1211) ամին ոչ գոյ խաղաղութիւն, զի ելեալ անօրէն եւ թշնամին Ղատը օղուն, ոչ պահելով զպատուէր թագաւորին, ժողովեալ բազում անթիւ զօրք ի վերայ իւր, կողոպտեաց շատ քաղաքն եւ շատ գիւղօրայս եւ թշնամութիւնն նորա յոյժ տարածուեցաւ ողորտս տիեզերաց յամենայն երկիր, մինչ եւ Կ. Պօլիս, եւ ի վերայ նորա եղեալ զօրքն բազում շատ էին. եւ ինքն էր հասակաւ կարճ. եւ եկեալ հակառակ եղեւ ի հետ քաղաքին, նստեալ ի բոլոր գիւղօրայս, աւերելով, եւ ի յահէ նորա զապիթ քաղաքին խորհուրդ արարին եւ քրիստոնէից մուհէստէք պահել տուին եօթ օր եւ եօթ գիւղեր ի դէպ գերեզմանին. եւ սպարապետեալ էին քաղաքն ամենայն վասն պատերազմութեան. եւ անօրէն այն ոչ կարաց մտանել, այլ ռիսս պահեալ

ի սրտի իւրում շրջէր բազում տեղիս աւերելով, եւ զօրքն նորա շատնային օր ըստ օրէ. եւ ի գարնան եկեալ ի գիւղն Թուղութ որ է ի մօտ քաղաքին եւ ի մէջ ձորին, և այլազգիքն ժողովեալ ամենեքեան գնացին պատերազմի վերա նորա. ի գլուխ գիւղին սակաւ մի պատերազմեցան, եւ թշնամիքն յախեան, վասն ի խոր տեղիս լինելոյ ոչ կարացին պատերազմիլ, գնացին աւերելով ի կողմն Սեբաստիոյ, հակառակ եղեալ ի հետ քաղաքին. եւ յաջան սպարապետեալ բազում զօրք, կռուեցան ընդ իրեարս, եւ սատակեցին զնա որպէս չար Յուլիանոս, եւ ի վերայ նորա իջեալ զօրքն, բազում ուննք սատակեցան եւ բազում ուննք ցրուեցան: Ի թագաւորութիւն Սուլթան Մուսթաֆային եւ զապիթ քաղաքին մեր հաճի Օսման, եւ ցորենին քիւլն 4 զլ: Եւ խարճն քաղաքին էր սակաւ:

ՌՄԺԲ. (1212) ամին լիութիւն և առատութիւն, եւ ձմեռն եղեւ սակաւ սաստիկ, եւ գարնան ապրիլ ամիոյ միջին աւուր մի օր էր, երեկոյեան խառնակեցաւ յերկինքն ընդ իրարս. շարժումն եւ որոտումն եղեւ յոյժ, եւ ի ահէ նորա սոսկացեալ բազում մարդիկ վասն սաստիկ բարկութեան յերկնից, ահարկու կայծակ իջաւ ի դէպ արեւմուտս ի մէջ ծառի միոյ, եւ մարդ ոչ մնասեաց. եւ բազում ամբ ծածկեալ զերեսս յերկնից, ոչ ծագեալ արեգակն, 9 օր ցողեաց զցող ողորմութեան ցորեկ գիւղեր, եւ ի նոյն ամառն հանդիպեալ երեք Թուղլու փաշայ, որ անուն նորա էր Սառի փաշա, եւ ունէր բազում եւ անթիւ զօրք եւ շատ ոսկի եւ արծաթ, կեցեալ ի քաղաքն մեր եօթն օր, մինչեւ դարիին քիւլն 2 զլ: Եւ վասն անհուն էսքէրներուն շատ եւ մասրաւ ըրաւ քաղաքին, եւ գնաց. յետ այնորիկ զապիթ քաղաքին ժողովեալ քրիստոնէից բազում սպարապետ վասն հատուցման, շատ ուննք ոչ կարացին հատուցանել, բազումնեղութիւնս կրեցին նստելով ի բանտ, և ուննց յախեալ աստ եւ անդ, նոյն տարին ցրուեալ մարդիկն բազում գիւղօրէից, այսինքն որ ասի Աշոտիք, վասն սպարապետ եւ վասն անօրէն թշնամի կողոպտողաց, զի եկեալ բազում նեղութիւնս տային եւ դերի էին շատ մարդիկս, եւ աւնէին գանձս որպէս կամէին: Թագաւորութիւնն Սուլթան

Մուստաֆային եւ զապիթ քաղաքին մեր Հաճի Օսման, եւ ցորենին քիլէն 6 դըշ էր :

ՌՄԺԴ (1215) ամին ձմեռն եղեւ հանդարտ եւ ի դարնան յանկարծօրէն եղեւ սղութիւն վասն բազում մարդկանց անպատրաստութեան . զի յառաջագոյնս լիութիւն էր, եւ յետ նորա եկեալ բազում քաղաքաց արապաներով ցորեան ի հնձոց ժամանակին, եւ այլազգեաց ոմանց առեալ եւ լցեալ խանն, զի բերեալ մարդկանց առնէին, վասն այնորիկ ոչ եղեւ սաստիկ սով : Եւ նոյն ամսուն թշնամի կար բազում, հակառակ ի հետ քաղաքին, աւերէին գիւղօրայսն եւ քաղաք ոչ կարէին մտանել, եւ ի նոյն տարին խարճն քաղաքին շատացեալ, եւ այլազգիքն ոչ տային պարտս, վասն այնորիկ պատրաստեալ քրիստոնէից գնալ ի Սեբաստիայ . ժողովեալ գնացին մինչ ի գիւղս Զընըսկի, ու զապիթն մարդ ուղարկեալ եւ ետ դարձուցեալ, շատ նեղութիւնս տըվեալ, եւ պահեալ ի բանտ : Թագաւորութիւն Սուլթան Մուստաֆային, եւ զապիթ քաղաքին մեր Հաճի Օսման եւ ցորենին քիլէն նոյն :

ՌՄԺԴ (1214) ամին կամաւն Աստուծոյ ոչ գոյ խաղաղութիւն ի մէջ քաղաքին . զի ձմեռն եղեւ սաստիկ եւ ձիւն եկեալ յերկնից բազում անգամ, եւ ի ամսուն թշնամի եւ կողոպտիչ կար ի կողմս մերում, այսինքն լէվէնտ, զի աւերին բազում գիւղօրայս, եւ զապիթ քաղաքին ժողովեալ վամենայն գուռ-գըս իւր, գնացին բացին ի գիւղն Մուրսաղ, պատերազմեցան ընդ հետ թշնամոյն եւ բերին վեց գլուխս նոցա, եւ շատ մարդ վիրաւորեցին, եւ բոլոր բաշի լէվէնտին աւերեալ բազում տեղիս, որ զինչ գիւղս ի բոլոր քաղաքին յահէ նոցա վախսան եթէ այլազգ. եւ թէ քրիստոնէաց ամենեքեանն օղուով, ուշադով, մալով, եկեալ ի քաղաք կեցան . եւ թշնամին այնքան հակառակ եղաւ ի հետ քաղաքին, զի կապեալ էր ի չորս կողմանց՝ զճանապարհս, եւ ոչ թողոյր որ գտր քելլիւն ի յայլ երկրէ, այլ կողոպտէր եւ բազում վնասս առնէր, եւ ի հնձոց ժամանակին ցորեան մնաց ի մէյտան վասն ահէ նոցա, եւ քաղաքացիքն ոչ գտեալ զհնար ի հետ թշնամոյն, շատ երկաթեղէնս, նալ մըլս, լաթեղէն, քիւրք, հանդերձ, փէշկէլ տվին եւ հաշտեցան ընդ իրարս, եւ պարտք

քաղաքին շատացեալ, եւ զուկուրդ քրիստոնէի մարդկանց, եւ աստ եւ անդ ցրուեալ վասն երկրին անխաղաղ լինելոյ : Թագաւորութիւն Սուլթան Մուստաֆային եւ զապիթն մեր Հաճի Օսման :

(Շարունակել)

ՆՈՐԱՎԷՊ

ԿՐՏՍՆԵՐ ՔՈՅՐԸ

Բօպէր Տէթանի նոր արթնցած է : Կ'երէ կը հագուի, կը բանայ պատուհանն որ դարաստանին վրայ կը նայի : Քանի մը մոխրագոյն ամպեր, ու ցօղի կաթիլներ, դեռ ոստերէն կախուած, տեսակ մը տխրութիւն կը սփռեն դաշտօրէից վրայ : Բօպէր սքանչանօք կը դիտէ բնութիւնն, ինչպէս սովորութիւնն է ամեն անգամ որ ձանձրանայ, եւ կ'երեւի թէ այս անգամ ալ յոյժ կը ձանձրանայ, վասն զի երկար մը կը յօրանջէ :

— Զարմանալի՛ բան, կ'ըսէ, լաւ մը քրնացայ եւ նորէն քուն ունիմ :

Ժամացոյցը կը նայի : Ժամը վեցն էր :

— Դեռ կանուխ է : Դղեկին մէջ ամենքն ալ պառկած են : Արդեօք նորէն անկողին մտնե՞մ : Բայց չէ, ծուլութիւն չ'ուզեմ . . . Սակայն ի՞նչպէս ժամանակս անցունեմ մինչև շաբաթի ատենը : Դուրս ելնեմ, գէշ չ'ըլլար . արդէն ամսէ մ'ի վեր է որ օգտիրոխութեան եկած եմ հօրաքրոջս տունը ո՛չ իսկ փոքր պտոյտ մ'ըրած եմ : Այդ պահասը լեցնեմ այժմ . . . գէթ սկսեմ . . . եւ փոխարինեմ, մանաւանդ որ երկու օրէն Փարիզ կը վերադառնամ :

Ինչպէս ըսաւ, այնպէս ալ ըրաւ : Պահարանէ մը անթափանց խոշոր վերարկու մ'առաւ զոր հօրեղբորորդին՝ Օթթավ Մարուպէլ թողած էր, գլուխը դրաւ թալեայ կախուղ գլխարկ մը եւ ոտքին ծայրերովը վար իջնալով, կամաց մը դուրս ելաւ մերմընջելով . « Յաջորդ շաբթու երբ Օթթավ գայ, պիտի տեսնէ որ իւր գործերը ես կը տեսնեմ » :

Բօպէր չիտակ ձանբան բռնեց, առանց զիտնալու թէ ո՞ր կերթար : Միաբը դրած

էր առաւօտեան պտոյտ մ'ընել. պտոյտը կ'ընէր ահա, եւ դիպուածով շուրջը կը դիտէր: Տեսարանը սիրուն էր արդարեւ: Ոչինչ այնքան հիանալի քան այդ անհարթ գետիններով դաշտօրայքն, խորթութիւնը, ճորերով, բլուրներով եւ պուրակներով: Նորմանտիոյ ամենէն գեղեցիկ դիրք ունեցող վայրն էր Վալթանվիլը, եւ ծաշէր ընտանեաց հայրն (Աստուած լուսաւորէ հոգին) յիրաւի չատ լաւ գաղափար մ'ունեցած էր ստորին գնով գնելով աւատական հին դղեկին աւերակները զորս վերաշինել տուած էր նոր ձեւով:

Բոպէր կը քայլէր ու կը մտածէր:

Այս տարի արձակուրդին բնաւ չէր զբուռնացած ի Վարթանվիլ, հօրաքրոջը տունը: Անձրեւոտ օդ մը, որ հարկադրած էր զինքը դուրս չ'ելնել շաբաթներով: Ո՛չ մէկ այցելութիւն, ո՛չ մէկ դաշտային պարահանդէս, ո՛չ խաղի ստուեր մը, եւ ո՛չ իսկ մանկամարդ աղջիկ մը որուն հետ կարենար սիրաբանել... Նորէն փոյթ չ'էր, եթէ Օքթավ Մարուզէլ հոն գտնուէր: Սակայն այս տարի երկու հօրեղբորդւոց արձակուրդը մի եւ նոյն ամսոյն չէին հանդիպած, եւ խորհրդարանին նստաշրջանը փակուած լինելով, Օքթավ պիտի գար ճիշդ այն պահուն, երբ ինքը՝ Բոպէր կը մեկնէր, պարտաւորեալ լինելով դեսպանատան կցորդի պաշտօնին գլուխն անցնիլ:

Այս մտածումներով կը քայլէր անընդհատ եւ առանց հոգնելու (քսան եւ ութ տարեկան հասակին մէջ դիւրաւ չ'յոգնիր մարդս) երբ զգաց թէ անօթի է: Անձրեւի քանի մը կաթիլներ գլուխը վեր վերցնել տուին. երկինքը սեւի սեւ մթնած էր:

— Այս չ'եղաւ, գոչեց. փոթորիկ մը պիտի փրթի. դղեակ վերադառնանք:

Վերադառնալը ըսելը դիւրին է. սակայն առ նուս՝ մէկ ու կէս ժամ պէտք էր դղեակ երթալու համար:

— Առաջին պտոյտս այնքան բազում էր չ'եղաւ, ըսաւ:

Լաւագոյն էր ապաստանարան մը զբոսնել, ագարակ մը ուր կարենար սկահակ մը կաթ խմել, սպասելով որ անձրեւը դադրի:

Այլ ու ձախ դիտեց. ոչինչ:

Վերջապէս դաշտերուն մէջ քիչ մ'ալ թափառելէ յետոյ, նշմարեց ի հեռուստ

փոքր խրճիթ մը, ուր հասաւ իբր քառորդ մը քայլէէ յետոյ, գլխէն մինչեւ ոտքը թրջած:

Հողաշէն խրճիթ մ'էր, խոզանէ տանիքով ծածկուած. պատուհանի նման բան մը, առանց փեղկի եւ ապակիի. խարխուլ տախտակներով կիսաբաց դուռ մը. Բոպէր ներս մտաւ առանց իսկ զարնելու:

Միակ խուց մը կար: Խորը մանուկ մը կը ննջէր՝ ողորահիւս որորոցի մը մէջ, եւ մէջ տեղը չոր փայտի կրակ մը կը վառէր երկու աղիւսներու մէջ տեղ, որոյ վրայ գեղջկուհի մը սան մը կը դնէր:

Բոպէր ի սկզբան ետ քաշուեցաւ:

— Կը ներես, խաթուն...

— Մտէ՛ք, պարոն, մտէ՛ք եւ նստէ՛ք, վասն զի անշուշտ հոգնած ըլլալու էք եթէ Վալթանվիլէն կուգաք:

Ձայս ըսելով գեղջկուհին խարխուլ աթոռ մը տուաւ, միակ աթոռն որ կը գըտնուէր խրճիթին մէջ:

— Անօթի ըլլալու էք, յարեց: Լաճիս եւ ինձ համար պէտք եղածէն աւելի կաթ ունիմ ըովս պատրաստ. ուրբաթ օրերը միշտ քիչ մ'աւելի կը կթեմ, վասն զի օրիորդին օրն է:

— Ո՞վ է օրիորդը:

— Ի՛նչպէս, չէ՞ք ճանչնար օրիորդը. գիւղին մէջ անոր եւ քրոջը խօսքը կայ միայն: Աստուած պահէ երկուքն ալ: Եթէ զաւկիս համար քիչ մը հագուստ կապուստ կը գըտնեմ, այն ալ անոնց շնորհիւն է: Եթէ սպասէք գոնէ մինչեւ կաթին եփիլը, օրիորդը կուգայ անպատճառ: Ո՛հ, իրաւ կ'ըսեմ, Աստուծոյ շնորհալի մէկ արարածն է:

Եւ բարի գեղջկուհին կը ճառատէր Օրիորդին վրայ: Այս միջոցիս Բոպէր՝ կրակին քով նստած, վրան գլուխը կը շորցնէր, մինչ սենեկին խորը, մանուկը կը ննջէր միշտ իւր անմեղ քունով:

Վաթը եւալ սկսած էր. գիւղացին գաւաթ մը լեցուց եւ կտոր մը սեւ հացով Բոպէրին հրամցուց:

Նոյն վայրկենին ձիու մը քառատրոփ ընթացքը լսուեցաւ. եւ ահա ներս մտաւ մանկամարդ աղջիկ մը, ամազոնակ մը հագած եւ խոշոր մեկնոց մ'առած վրան:

— Բարի լոյս, մայր Քատիւ... Ահա բերի...

Խօսքն ընդհատեց օտարականը նմարելով, եւ աւելի հանդարտ ձայնով մը յարեց .

— Ա՛ռ քեզի բրդէ հիւսկէնները զորս յանձնարարեցիր ինձ գտնել :

— Ա՛խ, օրիորդ, ո՛րչափ բարի սիրտ ունիք : Ի՞նչպէս էք, աղէկ էք : Այն ի՞նչ է . այսօր դուք եկած էք . քոյրերնիդ ո՛ւր է :

— Քիչ մ'անհանգիստ է, թեթեւ գլխուցաւ մ'ունի . անոր յանձնարարութիւնը ես կատարեցի . յուսամ թէ չես գանդատիր :

— Այդ ալ ըսելու խօսք է, օրիորդ : Յանձնարարութիւն ըսիք, չէ, այդ չըլլար : Մեր օրիորդներն ալ անա՛նկ բառեր կը գործածեն իրենց բարեգործութեանց վրայ խօսած առեւնին :

— Պզտիկդ կը քնանայ . չարթնցները : Քիչ վերջը վերէն վար նոր հագուստները կը հագուեցնես : Այս ի՞նչ գէշ օդ կայ : Մէտէրիք անտանիկի դարձած է . կենդանին կը դժկամակի դուրս ելնելու, երբ կ'անձրեւէ :

Եւ կէս մը դէպ ի Բոպէր դառնալով, իբր թէ բացատրելու համար իւր նուազ քաղաքավար խօսքը,

— Մէտէրիք՝ ձիս է, ըսաւ :

Բոպէր բաւական սեպեց բարեւել եւ ժպտիլ : Կոշտ մեծարանք մը եկաւ չրթանցը վրայ . « որչափ բարեբաստ է Մէտէրիք » պիտի ըսէր, սակայն լռեց : Պարահանդէսի մէջ չ'լինելուն, պատշաճից հակառակ կը սեպէր խօսիլ, բան մը չըսելու համար :

— Անթի իմ, յարեց աղջիկը :

Եւ արագ շարժումով մը, մեկնոցն հանելով, նստաւ ամբողջին վրայ . զոր Բոպէր փութացած էր ներկայել եւ սկսաւ ուտել ու խմել :

Հիանալի էր նա այս դիրքին մէջ : Կաթը զոր կը խմէր, սպիտակ նուրբ գիծ մը կը թողուր չրթանցը վրայ, եւ տեսնելով նորա սեռաւ աչքերն ու ոպնիաղեայ մազերը՝ մետաքսեայ երկայն գլխարկին ներքեւ վեր առնուած, մարդ կը կարծէր տեսնել :

Նախնի դիւցազնուհի մը իւր սեւ սաղաւարտով :

Բոպէր ինք խցեց նախ լռութիւնը :

— Զմարիտն ըսելով, օրիորդ, անտառին մէջ առաւօտեան պառոյտս ընելով չէի յուսար որ ձանրուս վրայ հանդիպէի Փարիզուհւոյ մ'այսքան . . .

— Սքանչելի, ըսէ՛ք բառը, հոգ չէ : Ես վարժ եմ մեծարանքներ լսելու : Արդէն սուրբ երկիւղ մ'ունիմ մեծարանքներէ եւ ճիշդ անոնցմէ խոյս տալու համար է որ հայրս կ'ստիպեմ կարելի եղածին չափ երկար ատեն դիւղը մնալ : Զիտ մը ոտից թոփիւնն աւելի հաճոյ է ինձ քան աշխարհի ամենէն ոգեւորիչ վալան, եւ պարողացս վայժայանքները նուազ քաղցր կուգան ինձ քան հովին գգուանքներն :

Այս կերպով խօսեցաւ դեռ, նրբութեամբ ծաղրելով ընկերային պատշաճութիւններն եւ գովելով դաշտային կեանքի հաճոյքները :

— Բայց բան մը կը զարմացնէ՛ դիս, յարեց, վասն զի վերջապէս կը տեսնեմ որ հակառակ ձեր գեղջային հագուստներուն, ճշմարիտ Փարիզցիի մը կը նմանիք . ի՞նչպէս եղաւ որ յօժարեցաք այս վայրի անտառաց մէջ մոլորիլ . . .

— Մոլորիլ բուն բառն է, օրիորդ : Յանկարծ անձրեւի բռնուելով, այս բարի կընոջ տունը մտայ, միմիայն անպատարան մը գտնելու մտօք : Ուրիշ արժանիք մը չունիմ անկեղծութենէս դատ . ուստի չ'պիտի ձգնիմ իմ ներկայութեանս տալ նոյն պատճառն որ աստ մղած է զձեզ . . . այն է որդրմածութիւնն : Այլ դուք օրինակ կը հանդիսանաք ինձ եւ այդ կէտին մէջ ձեզ հետեւիլ կ'ուզեմ : Անշուշտ բաղմաթիւ են ձեր աղքատներ . կը ներէ՞ք ինձ որ օգնեմ ձեզ :

Եւ Բոպէր, գէպ ի գեղջիկուհին երթալով, երկու ոսկի դրաւ անոր ափին մէջ . ապա, մանկամարդ աղջկան դառնալով, բըսալը կարկառեց .

— Զեր պաշտպանեալներուն բաժնեցէք զայս :

Եւ տեսնելով որ կը դժկամակէր նա,

— Ոհ, մի՛ մերժէք, ըսաւ : Զէք գիտեր որչափ երջանիկ եմ որ կարող կը լինիմ մասնակից լինիլ ձեր բարեգործութեանց :

Աղջիկը կը վարանէր : Քսալը լի էր եւ իրեն դժուար կուգար այսքան մեծ գումար մ'ընդունիլ օտարականի մը ձեռքէն . . . նոյն լակ իւր աղքատաց համար :

Յայնժամ Բոպէր բռնեց անոր ձեռքէն, եւ մեղմիկ, կարելի եղածին չափ մեղմիկ բանալով զայն .

— Առէք, ըսաւ, խնդրեմ, առէ՛ք : Բա-

րեգործութիւն է նաև չմերժել զանոնք որք կը պաղատին :

Օրիորդն յօժարեցաւ թեթեւ մը կարմը-րելով . ապա խօսքը փոխելով,

— Օրն իրիկուն կ'ըլլայ, ըսաւ, պէտք է ալ տուն դառնամ :

Մեկնոցն ուսերուն վրայ առաւ եւ դուրս ելաւ : Բոպէր ետեւէն գնաց :

Դուրսը, Մէտէրիք՝ ծառի մը կապուած, դափը կուտար ոտքերովը . Բոպէր օգնեց օտարուհւոյն որ ձին հեծնէ և երբ հեծաւ, խարազանն օղին մէջ տատանելով ու մեկնելու պատրաստ :

— Օրիորդ, ըսաւ, դիպուածը կամ լաւ եւս նախախնամութիւնը թոյլ տուաւ ինձ որ ձեր դէմ ելնեմ : Երկու օրէն կը մեկնիմ եւ դուցէ այլ եւս երբէք չտեսնեմ զձեզ : Այլ չպիտի մոռնամ զձեզ բնակին : Չանձրոյթի եւ ախրութեան ժամերու մէջ, որոց մով լի է կեանքը, իբր կենսատու և լուսապայծառ տեսիլք մը պիտի երեւիք ինձ : Ներեցէք որ այդ տեսիլք աւելի որոշ յիշատակ մը թողու յիս : Յայտնեցէ՛ք ձեր անունը, խնդրեմ :

Մանկամարդ աղջիկը վերստին կարմրեցաւ . ապա, վայրկեանէ մը, պատասխանեց հպարտութեամբ .

— Օրիորդը :

— Օրիորդը . այո՛, դիտեմ . այս անուամբ կը ճանչնան զձեզ գաւառին մէջ բոլոր դիւղացիք որոց սիրտը լի է ձեզմով : Այլ միթէ զիս ուրիշներուն հէ՞տ կը չփոթէք : Գիտեմ, այո՛, մասնաւոր շնորհ մ'է այս զոր կը հայցեմ : միթէ իրաւունք ունիմ, անշուշտ ո՛չ . բայց ի՞նչ փոյթ : Բաւ է որ կրցայ պահ մը իմ լումայս ձեր լումային հետ խառնել եւ յուզուեցայ ձեր ողորմածութեան բաղքը օրինակաւն : Ազնուականութիւնն հարկ կը դնէ Ձեզ անկէ քաջալերել զիս այս շաւղին մէջ զոր հարթեցիք իմ առաջ . եւ երբ աղքատ մը, ընդհակառակ ինելով իմ ողորմութենէս, ըսէ ինձ «Աղօթող եմ ձեր երջանկութեան համար», կ'ուզեմ որ կարենամ պատասխանել «արթ եցէք նորա երջանկութեան համար» : Հապ օ՛ն ուրեմն, ըսէք ինձ այդ անունը :

Աղջիկն եւս քան զեւս չիկնեցաւ, թե-թեւ մը գլուխն օրօրերելով ի նշան մերժման : Եւ որովհետեւ միւսը կը պնդէր, հա-

մարձակելով ձեռքը բռնել, վախ մ'ղգաց եւ յանկարծ, հակիրճ ձայնիւ, իբր թէ վայրկեական մոռածման մ'անսարով եւ ուզելով պատասխանել վերջապէս երիտասարդին .

— Շարլօթ Թրիւմլօ, ըսաւ :

Եւ նոյն ժամայն մտրակեց երիվարն որ մեկնեցաւ սրարչաւ :

Բոպէր աչքովն անոր հետեւեցաւ, մինչեւ որ հորիզոնին վրայ փոքրիկ կէտի մը պէս երեւցաւ . ապա, տրտում տխուր եւ դանդաղ քայլերով, դղեակին ճամբան բռնեց :

Բ.

— Աստուած համբերութիւն տայ ինձ : Այս ո՛րչափ ուշ մնացիր, Բոպէր : Կէս օրը տաս անցած է, դղեակը վեր ի վայր եղաւ : Մեր բոլոր սովորութիւնները կը խանդարես : Շուտ սեղան նստինք եւ նախաճաշի ժամանակ պատմես ինձ թէ ի՞նչ պատճառաւ այսպէս շեղեցար քու սովորական ճշդ դապահութենէդ :

— Կը հնազանդիմ :

— Շատ անօթի լինելու ես . . . և կամ ես կը սխալիմ, վասն զի իմաց տուին ինձ թէ առաւօտուն ժամը վեցին ելեր ես : Գուցէ ժամադրութիւն մ'ունէիր . . . հէ՛ . . .

— Ի՞նչ կ'ըսես հօրաքոյրս, ժամադրութիւն մը : Խնդրեմ միտքդ մ'անցուներ :

— Քիչ մը ձուկ ա՛ն :

— Կ'առնեմ, հօրաքոյրս : Որո՞ւ հետ ժամադրութիւն կրնայի ընել . չմոռնանք որ ձեր գեղջկուհիներն ալ սիրուելու բաներ չեն . չորցած ձեռքեր : Ձէ՛, այդ բանը մի՛ ըսէք : Պարզապէս անտառին մէջ պտոյտ մ'ընելու գնացի . հոն անձրեւի բռնուելով, հարկադրեցայ գիւղացիի մը հիւղակն ապաստանիլ :

— Կամ գեղջկուհւոյ մը հիւղակը :

— Այնպէս թո՛ղ ըլլայ : Խեղճ կ'ին մը . . . զաւկին հետ : Գաւաթ մը կաթ խմեցի : Պրիւմլօն կը ճանչնա՞ք, հօրաքոյրս :

— Ա՛հ, վերջապէս ըսիր : Սիրելի Բոպէրըս, փոխանցման արհեստին մէջ յաջողակ չես : «Գեղջկուհիի մը աղքատ հիւղակն ուր գաւաթ մը կաթ խմեցի» եւ հանդիպեցայ Թրիւմլօ օրիորդներէն միոյն որ հիանալի

երեւցաւ ինձ . այս պատճառաւ է որ կը հարցնեմ ձեզ թէ կը ճանչնա՞ք անոնց հայրը , վասն զի եթէ Օր . Թրիւմբօ կարգելիք աղջիկ մ'է , բարեբաղդութիւն պիտի համարիմ իմ ձեռքս և սիրտս անոր ոտից առջեւ դնել : Այս չէ՞ր ըսել ուզածդ :

— Գրեթէ :

— Հաւու թեւ մը տա՞մ քեզ :

— Տուր , հօրաքոյրս :

— Ա'ռ : Սիրով կը տեսնեմ որ սէրը ախորժակդ չի փախցունէր . հիմայ ինձ մտիկ ըրէ : Պ . Թրիւմբօ երկաթի նախկին վաճառական մ'է՝ գործէ քաջուած եւ միլիոնատէր : Պատուանշան ալ ընդունած է , չի տակը չգիտեմ թէ ինչո՞ւ : Մեծ հաճոյք կ'զգայ զինուորական ասպարէզէն քաջուող սպայի մը կերպարանք առնուլ , խօսելով այն ծերունի զնդապետներուն պէս որոց ծաղրական նկարներն այնքան չափ կը հանուին : Ի մի բան , կրնամ զրուցել թէ եղական բնութիւն մ'է :

— Ես ալ տիպար մը :

— Երկու աղջիկ ունի , երկու հրապուրիչ աղջիկներ : Ձգիտեմ ինչո՞ւ այսպէս են : Բնութեան մէկ տարօրինակութիւնը , առհաւութեան արդիւնք մը : Ի՞նչ եւ է , իրողութիւնն այն է որ հիմնալի աղջիկներ են : Պարզ , մարդասէր եւ բարի . աղքատ սիրութիւններն երկու մղոն հեռուէն կը փայլի եւ այս կողմեր չ'կայ դիւզացի մը որ անոնց ձեռքէն նպաստ մ'ընդունած չը լինի . . . եւ միշտ փափկութեամբ կը նուիրեն : Մանաւանդ սոյաակութիւններն սիրած եմ որ մեծ հոգ կը սանկն որ ծածկեն իրենց բարեգործութիւնները : Թէ ձիւնէ , թէ անձրեւէ , ի՞նչ փոյթ , անոնք դաշտերն ի վեր կ'երթան իրենց բարիքները սփռելու , և միշտ առաւօտուն կանուխ , հետաքրքիր աչքերէ խոյս տալու համար : Գաւառնիս երկու դօտիի բաժնած են . Էսթէր հիւսիսայինն առած է , Շարլօթ հարաւայինն : «Օրիորդները» կը կոչեն զանոնք գիւղացիք , եւ երբ «Օրիորդները» կ'ըսուի , ամեն բան մէջն է : Լըմբար կ'ըսեմ , Բոպէր , եթէ անոնցմէ մին հաճոյ երեւցաւ քեզ , շատ գոհ կ'ըլլամ Բոէ՝ տեսնեմ , երկուքէն ո՞րն է որ . . . ինչպէս ըսեմ . . . սիրող արուիւկ տուած է :

— Մօրաքոյրս , եթէ այդպէս ծիծաղիս երբէք չպիտի համարձակիմ . . .

— Ուրեմն կ'ուզես որ ես գուշակեմ : Դարաստանէն դացիր մինչեւ մեծ վանդակադուռը . բնականաբար աջ կողմի ճանրուն հետեւեցար . յետոյ ձախ կողմէ դառնալով անտառը մտար : Այն ատեն Շարլօթը կը սիրես :

— Ճշմարիտ է , մօրաքոյրս :

— Գէշ ճաշակի տէր չես . խոշոր սեւ աչքեր , դեղեցիկ սեւ մազեր . արդէն երկուքն ալ թխադոյն են եւ մին քան զմիւսն հրապուրիչ : Ուրեմն , կատակը մէկ կողմ թողլով , կըսիրե՞ս :

— Ամենայն լրջութեամբ :

— Աւելի լաւ . շատ ուրախացողցիր զիս : Միշտ երազած եմ այնպիսի հարս մ'ունենալ որուն սիրտը տաք ըլլայ մեր գաւառին վըրայ , եւ հետո ընկեր լինի այն երկար ժամերուն յորս տունը կը փակուիմ յօդացաւիս պատճառաւ , եւ որ զքեզ ալ վար դնէ , մեծ ասպերախտ : Եւ գիտե՞ս թէ ե՞րբ այդ ուրախութիւնս չափ եւ սահման չպիտի ունենայ : Այն ժամանակ , երբ երկրորդ երբօրորդիս ալ նոյն պայմանաց մէջ ամուսնանայ : Եթէ այնպէս մը դարձնէինք որ միւս քոյրն ալ ինք առնուր . . . ի՞նչ կ'ըսես :

— Թո՛ղ որ նախ մէկին հետ ամուսնանամ ես :

— Այո՛ , կարելի եղածին չափ շուտ : Կ'ուզե՞ս նախնական տեսակցութիւն մ'ունենալ , եւ ուսումնասիրել գործի ձեռնարկելէ առաջ :

— Աւելորդ է , հօրաքոյրս : Ես թեթեւամիտ չեմ : Ձե՞ս յիշեր որ խեղճ մայրս ի՞նչ կ'ըսէր քեզ . «Բոպէր կեանքին մէջ մէկ անգամ միայն պիտի սիրէ . այլ անգամ մը որ սիրէ , ալ չպիտի բաժնուի» : Սիրեցի , ուրեմն կը յարիմ : Հիմայ , մօրաքոյրս , ե՞րբ պիտի երթաս Շարլօթի ձեռքը խնդրելու :

— Վերադարձիդ , այսինքն ամիսէ մը :

— Ամիսէ՛ մը . ո՛հ , անտանելի է այդ . այդչափ միջոցի մէջ վարպետորդիին մէկը կ'ընայ . . .

— Ուրեմն , շատ պարզ միջոց մը կայ : Քեզի նամակ մը կուտամ Պ . Թրիւմբօի ուղղեալ : Նամակին մէջ կը յիշատակեմ բոլոր քու փայլուն յատկութիւններդ . . . մինչեւ իսկ քիչ մ'ալ աւելադրութեամբ կը խօսիմ . . . Նամակը կը յանձնես և խնդիրդ կը յայտնես հաճոյական կերպով մը :

— Աւելի լաւ կ'ըլլայ կարծեմ եթէ դու անձամբ խօսիս :

— Այդ գէշ միջոց է : Փաստաբանը ուրիշ բանի չեն ծառայած բայց եթէ գործերն աւելի խանդարելու . իմ կարծեօք , պէտք է որ ամբաստանեալն անձամբ պաշտպանէ իւր դատն : Ասկից զատ . . . ուրիշ արդեւք ալ կայ : Ես դուրս չեմ կրնար ելնել , մինչեւ իսկ կառքով : Յօդացաւս տան մէջ գտնած է դիս :

— Լուր զրկէ ուրեմն Պ . Թրիւմլըօն որ գայ տեսնէ զքեզ :

— Յոռի միջոց է այդ : Պ . Թրիւմլըօն ինձ այցելութիւն տալու համար բնականաբար պիտի հարկադրի լօգիկն հագնիլ , և այս բաւական է զինքը մորոսացնելու համար : Թեթեւաբարոյ կիներ կան որք անգամ մը որ պախճաւանդ (թոքե) հագնին , անմատչելի կը դառնան : Պախճաւանդն անոնց գրահէ : Պ . Թրիւմլըօ ալ երբ հագուի՝ ամրացեալ բերդի կը նմանի : Իսկ իւր տան , իւր պարտիզին մէջ , կտաւէ հագուստներով , զիւրին է զիմեւ անոր . . . եւ քիչ մը ճարպկութեամբ տէր կ'ըլլաս :

— Բաւական ճարպկութիւն կ'ունենամ , մօրաքոյրս :

— Այդ յուսամ , սիրելիս : Դժուար գործ : Այդ Թրիւմլըօն կատարեալ զիւանագէտ մ'է : Ճաշերնիս աւարտեցաւ , դեռ ամսորժակ ունի՞ս :

— Ո՛չ , հօրաքոյրս :

— Ուրեմն զնա՝ քիչ մը ժուռ եկուր : Օդը գեղեցկացաւ ահա , եւ քանի որ չըլած պայութեան փափաք ունիս , չեմ արդիւր որ երթաս քու սիրեցեալ աղաւնեկիդ շուրջը թափառիս : Իսկ ես պիտի ելնեմ զրեւիք նամակիս վրայ խորհիլ դժուար նամակ մ'արդարեւ , ուր պէտք է յատկութիւններ գտնեմ քեզ վերագրելու համար . ի՛նչ եւ է օգտակար սուտեր ալ կան :

Եւ տիկին ծաշէր փոքրիկ քայլերով իւր խուցն ելաւ , մինչ Բոսէր դնաց հագուիլ , հաստատապէս մտադրելով ամեն ինչ աչքն առնուլ , գոնէ վայրկեան մ'իւր սիրեցելոյն երեսը տեսնելու համար :

ԺԻՒԼԻԵՆ ՊԷՐ ՏԸ ԹԻԻՐԻԲ
(Շարանակէք)

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆՆ

ՊՐՈԽՔԼԻՆ , 20 Յունիս 1885

Պարթօլտի հսկայական գործն , արձանն «Ազատութեան որ կը լուսաւորէ զաշխարհ» , չէ անձնական պարգեւ , այլ ժողովրդային , նշան անխղելի բարեկամութեան՝ զոր Գաղիացիք ցուցուցին առ Միացեալ Նահանգս , սոցա գոյութեան առաջին դարուն . արձանն է առհաւատչեայ յարատեւութեան նոյն բարեկամական յարաբերութեանց ի մէջ երկու մեծ Հանրապետութեանց՝ չին եւ Նոր աշխարհներու :

Գաղիա է միակ ազգն որուն պարտական են Միացեալ Նահանգք յատուկ երախտագիտութիւն : Լուգովիկոս ԺԶ . եղաւ առաջինն որ բարոյական քաջութիւն ունեցաւ ճանչնալու զԱմերիկա իբրեւ անկախ պետութիւն : Գաղիական դաշնակցութիւնն եղաւ մի մեծ եւ վճռական տարրն ազդեցութեանց՝ որ տարին յեղափոխական պատերազմն ի յաջողութիւն :

Գաղիա յեղափոխական կռուին ատեն զրկեց յԱմերիկա 15,000 զօրք , և բաց ի ֆըրէկաթներէ քառասուն եւ հինգ հասարակ պատերազմական նաւ . բայց եղան այնպիսի ատեններ որ զօրքէ եւ մարտանաւերէ աւելի դրամի պէտք ունեցան Ամերիկացիք , եւ երբ ազգային գանձը պարապ էր եւ թղթադրամն անարժէք , գաղիական կառավարութիւնը տուաւ Ամերիկայի աւելի քան եօթը միլիոն թաւեր . այս չ'ը բոլոր օգնութիւնն զոր Գաղիա ըրաւ Միացեալ Նահանգաց ճգնաժամին ատեն : Երկու հարիւր թնդանիսթ , 4,000 վրան եւ 30 հազար ձեռք զգեստ եւ ուրիշ շատ ռազմավորք բարձած երեք նաւեր եւս նիւթական եւ բարոյական շատ օգնութիւններ տարին Գաղիայէ յԱմերիկա :

Ամերիկեան եւ գաղիական ժողովրդոց այս բարեկամութեան յիշատակը յաւերժացունելու նպատակաւ ձեռնարկուեցաւ մեծ արձանին շինութեան :

Մ . Պարթօլտի հետեւեալ կերպով կը պատմէ թէ մեծ գաղափարն ի՛նչպէս ծագում առաւ :

Քսան տարի առաջ Մ. Պարթօլտի երկույ մը կ'ընթերցէր Մ. Լապուլէի տունը, ուր կային նշանաւոր քաղաքագէտներ եւ գրագէտներ: Միջազգային յարաբերութեանց վրայ խօսք բացուեցաւ, եւ կոչնականներէն մին դիտողութիւն ըրաւ թէ ազգաց մէջ երախտագիտութիւն չմնար, եւ յարեց իրեն օրինակ ի հաստատութիւն իւր դիտողութեան թէ Գաղիա անցելոյն յիշատակին վրայ յենով չկրնար պահել Միացեալ Նահանգաց բարեկամութիւնն: Լապուլէ պատասխանեց թէ ամերիկեան ազգն աւելի համակրութիւն ունի Գաղիոյ վրայ քան ուրիշ որ եւ իցէ եւրոպական ազգի վրայ, եւ այս համակրութիւնն հիմնեալ է այն հասարակաց ճգանց եւ տենչանաց յիշատակին վրայ, զոր ունեցան Ամերիկացիք եւ Գաղիացիք ի միասին: Ամերիկեան անկախութեան կոռուոյ մէջ ինչ որ ըրաւ Գաղիա՝ չէր պարզ ծառայութիւն մը զոր ազգ մը կ'ընէ բարեկամ ազգի մը, այլ էր եղբայրութիւն զգացմանց, ընկերակցութիւն Զանից եւ յուզմանց. եւ երբ սրտեր ի միասին բախած են՝ բարեկամական զգացում կը մնայ միշտ ինչպէս անհատից՝ նոյնպէս եւ ազգաց մէջ: Գաղիոյ կառավարութեան քաղաքական գործը կրնայ ծանօթ չըլլալ ընդհանուր ժողովրդեան Ամերիկայի մէջ, բայց Լաֆայէթի անունն ամենուն ծանօթ է. եւ եթէ Ամերիկայի մէջ արձան կամ կոթող մը պիտի կանգնուէր ի յիշատակ անկախութեան, Լապուլէ կը խորհէր թէ շատ բնական պիտի ըլլար որ երկու ազգաց միութեան ջանքը կանգնուէր, եւ յիշատակարանն ըլլար գործ հասարակաց երկու ժողովրդոց:

Լապուլէի այս խօսքերը խոր տպաւորութիւն ըրին Մ. Պարթօլտի մտաց վրայ: Հինգ տարի անցաւ, Փրանքօ-գերմանական պատերազմը բռնաւ, եւ Մ. Պարթօլտի դիմեց Արեսեան դաշտը: Պատերազմէն ետքը խորհեցաւ ուղեւորութիւն մ'ընել յԱմերիկա, եւ օր մը գնաց ի Վէրսայլ տեսնել իւր բարեկամը Մ. Լապուլէ, զոր տեսած չէր փշուայ երկար ամիսներէ ի վեր:

Մ. Լապուլէի տունը կային այս անգամ եւս նշանաւոր անձինք եւ դարձեալ խօսակցեցան ամերիկեան զգացմանց վրայ առ Գաղիա, եւ այն օգնութեանց վրայ զորս

Ամերիկացիք պատերազմի առեն զրկեցին ի Գաղիա:

Լապուլէ դարձեալ իւր գաղափարներն յայտնեց, եւ յայտարարեց որ Ամերիկայի անկախութեան հարեւրամեայ տարեգարծի առեն Միացեալ Նահանգաց կողմէն առ Գաղիա սիրոյ ընդհանուր ցոյցեր պիտի ըլլան անտարակոյս. եւ ըսաւ Մ. Պարթօլտի. «Գնա, տեսիր երկիրը, պիտի ուսումնասիրես դայն, եւ տպաւորութիւններդ պիտի բերես մեզ: Մեր բարեկամաց, որ յԱմերիկա, առաջարկէ՝ մեզ հետ կանգնել արձան մը, հասարակաց գործ մը, ի յիշատակ վաղեմի բարեկամութեան Միացեալ Նահանգաց եւ Գաղիոյ: Եթէ ունիս երջանիկ գաղափար մը, յատկապէս մը, որ ընդհանուր խանդ եւ եռանդ չարժէ, մեք համոզուած ենք որ գործը պիտի յաջողի երկու երկիրներու մէջ, եւ պիտի ընենք գործ մը, որ պիտի ունենայ ընդհանուր եւ տեւական բարոյական ազդեցութիւն»:

Պարթօլտի ճանբայ ելաւ դէպ յԱմերիկա, եւ ճանբան յիշատակարանի յատկապէս վրայ կը խորհէր. բայց յատկապէս արուեստագիտին մտաց մէջ յատուկ ձեւուած չէր մինչեւ որ նա տեսաւ Նիու-Եօքքի փառաւոր նաւահանդիստը: Պետլօի կղզոյն վրեժ տեսարանէն ներշնչուելով արուեստագէտն ինքնին գոչեց. «Այո՛, բուն այս տեղը կանգնուելու է Արձանն Ազատութեան, մեծ՝ իրենց զգաղափարն զոր կ'անձնաւորէ, լուսածառալ ի վերայ երկուց աշխարհաց»: Մ. Պարթօլտի հինգ ամիս ուղեւորութիւն ըրաւ Ամերիկայի մէջ եւ տեսակցեցաւ երկրին մեծ անձերէն շատերուն հետ եւ մեծ քաջալերութիւն գտաւ ամենէն: Ի դարձին ի Գաղիա Մ. Պարթօլտի իւր ուղեւորութեան արդիւնքն եւ իւր տըպաւորութիւններն հաղորդեց նշանաւոր Գաղիացւոց որ ժողոված էին Մ. Լապուլէի տունը:

Հոն գրուեցաւ հիմն Ֆրանքօ-Ամերիկեան Միութեան այն ընկերութեան, որ Ազատութեան արձանին համար դրամ հանգանակեց: Բոլոր Գաղիոյ մէջ շրջաբերութեան հանուեցան հանգանակութեան թղթեր, որոց գլուխը կար հետեւեալ նախաբանն ի գրէն Լապուլէի.

«Անկախութեան յիշատակարանը պիտի

կանգնուել միաբանութեամբ երկուց ժողովրդոց որ ընկերացած են այս եղբայրական գործին մէջ ինչպէս յառաջագոյն ընկերակցած էին հաստատուելու անկախութիւնն : Այսպէս անկորնչելի յիշատակարանաւ մը հռչակենք այն բարեկամութիւնն զոր մեր հարց ի միասին հեղած արիւնն կնքած է երկու ազգաց մէջ, բարեկամութեան դաշնագիր մը որ պիտի կնքուի բոլոր սրտերէ որ կ'զգան իրենց հայրենեաց Սէրը :

Այս հրաւերին յօժարակամ պատասխանեցին առատ նուէրներով Գաղիոյ մէջ ամէն դասէ եւ ամէն տարիքէ մարդիկ, զօրապետներ, նախարարներ, Երեսօխոսաններ, գիտուններ, Ակադեմիոյ անդամներ, հեղինակներ եւ արուեստագէտներ :

Նիւ-Եորքի մէջ ալ յանձնաժողով մը կազմուեցաւ նշանաւոր ամերիկացիներէ, որոնք Միացեալ Նահանգաց կառավարութեան խնդրեցին հաւանութիւն ընդունելու դադրական ազգին պարգեւն եւ արձանը կանգնելու համար տեղն որոշելու : Ամերիկայի ազգային ժողովն 1877 թիւար. 22ին գադրական ազգին եւ արձանին մասին բարձր դովեստներով որոշեց ընդունիլ պարգեւն, եւ տեղը ցուցուց Պէալօի կղզին Նիւ-Եորքի նաւահանգստին բերանը : Արձանին գլուխը շինուեցաւ եւ պատրաստուեցաւ 1878ի Բարիլեան Արուեստահանդիսին համար : Հետեւեալ տարին բոլոր ծախքին համար հարկաւոր դրամը պատրաստ էր : Արձանը գլորեթէ բոլորովին պատրաստ էր 1883ին եւ ժամանակ մը դրուեցաւ ի հանդէս Բարիլի մէջ : 1884 յունիս 11ին գադրական կառավարութիւնն յայտարարեց թէ ինք եւս կ'ուզէր մասնակից ըլլալ գործին, եւ ծանոց որ արձանը պիտի փոխադրուէր Ամերիկա Գաղիոյ կառավարութեան մէկ նաւով Գաղիոյ պաշտօնական դրօշին ներքեւ :

Մ. Լէսէքս, որ յետ մահուան Մ. Լապուէի եղած էր նախագահ Ֆրանքօ-Ամերիկեան միութեան, պաշտօնապէս յանձնեց արձանն 1884 յուլիս 4ին Աղատութեան տարեդարձի օրն Միացեալ Նահանգաց դեսպանին ըսելով .

«Միացեալ Նահանգաց չը յանձնեմ արուեստի մեծ գործն, որուն շինութեան հաւանած եւ մասնակից եղած են իրենց բնակներով 180 քաղաքներ, քառասուն ընդ-

հանուր ժողովներ, բազմաթիւ առեւտրական սենեակներ եւ ընկերութիւններ, եւ աւելի քան 100,000 բաժանորդներ» :

Այս արձանն երեք օր առաջ հասաւ Նիւ-Եորքի նաւահանգիստն եւ շատ չքեղ հանդիսիւ ընդունուեցաւ : Աղատութեան այս արձանն իւր տեսակին մէջ եղական եւ մեծագոյնն է . Հռոդոսի արձանն, աւանդութեան անոր ընծայած մեծութեամբն հանդերձ դաժաճ մ'էր ասոր քով : Ուրիշ մեծ արձաններ եւ կոթողներ ալ համեմատութեամբ փոքրագոյն են : Միւնիխի մէջ Պաւարիոյ արձանն է 15,75 մէթր, Ս. Կարլոս Պորամէօի արձանն է 22 մէթր . Վանտովի սիւնը Բարիլի մէջ է 44 մէթր, իսկ Աղատութեան այս արձանն յատակէն մինչեւ ջահին ծայրը 46 մէթր է, արձանին մեծութեան վրայ գաղափար մը կրնայ կազմուիլ հետեւեալ հաշիւներէն .

Ցուցամասն է 2.45 մէթր եւ ցուցամասին երկրորդ յօդուածին շրջագատն է 1.44 մէթր : Եղունդն 0.35 մէթր երկայն, 0.26 մէթր լայն : Գլուխն է 4.40 մէթր բարձր : Աչքն է 0.65 մէթր լայն : Քիթին է 1.12 մէթր երկայն : Իբր 40 անձինք կրնան նստիլ դիմոյն մէջ : Ամբողջ արձանին ծանրութիւնն է 200,000 քիլօկրամ, եւ բոլոր գործին համար ծախք եղած է աւելի քան մէկ միլիոն ֆրանք :

Արձանը շինուած է կոկուղ պղնձի տախտակներէ, որ հաստատուած են երկաթեայ շատ զիւնցիլուն սիւնակներու եւ խոյակներու վրայ : Մտթեմաթիկական նուրբ հաշիւներ եղած են երկաթի կտորներուն դիմանալու զօրութեան, ծանրութեան կեդրոնին, եւ սաստիկ հողմերու ներգործութեան վրայ : Հաշիւներ եղած են հիմքունելով ամենէն զօրաւոր մրրիկներն որ երբէք նշանակուած են Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ : Պղնձեայ տախտակներու թանձրութիւնն է 2½ հաղարամէթր : Սուրբ Կարոս Պորամէօի արձանին պղնձեայ տախտակներու թանձրութիւնն է մէկ հաղարամէթր միայն, եւ արձանը դիմացած է աւելի քան երկու դար :

Տ. ՀԵՔԻՄԵԱՆ ՍԻՆԵՍ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ԵԱՅԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

23-28 ՅՈՒՆԻՍ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Քարէնդան Բօլէիէ կը հրատարակէ իւր Գահիրէի թղթակցին մէկ նամակն, հաստատապէս ծանուցանող թէ Անգլիա թողած է իւր մտադրութիւնն ուրիշ Տէրութեան մը գրաւել տալու զՍուաքիմ:

— Ֆրանսայի երեսփոխանաց Ժողովը վաւերացուց Զինատանի հետ խաղաղութեան դաշնագիրը:

— Ռուսիոյ Պետական Խորհուրդը մէկ ու կէս միլիոն ռուբլի յատկացուց Սեւ ծովու մէջ Նիքոլայէֆի նաւահանգստին շինութեան ամբողջացման:

— Սպանիոյ մէջ քոլերան կը սաստկանայ օր աւուր: Յուլիս 7ին քոլերայէ բռնուողներուն թիւն է 1700, որոց 700 ը մեռան: Մեռնողներու թիւն ամենէն շատ է Վալէնչիոյ Մուրչիոյ նահանգաց մէջ:

— Լորտ Էտմունտ Ֆիլմ Մօսկա, նախորդ խորհրդական Լորտ Կրանվիլի, երկար բանախօսութեամբ մը բացատրեց թէ ազատական կուսակցութեան հիմնադիրը պիտի լինի, առաջիկայ ընդհանուր ընտրութեանց առթիւ, (Ա) Գաւառային և տեղային ինքնօրինութեան նոր և առաւել ազատամիտ կազմակերպութիւն մը յԱնգլիա, Սկովտիա և Իռլանտա: (Բ) Նորոգ բարեփոխում երեսփոխանական ժողովոյ ներքին կանոնադրութեան: (Գ) Նոր բարենորոգում հողային օրինաց: (Դ) Եկեղեցական կալուածոց և ստացուածոց աշխարհականացում: (Ե) Բարենորոգում Լորտերու ժողովոյն:

— Մարդի գեսպանութիւնը Ֆրանսական Հանրապետութեան Նախագահին ներկայացաւ յուլիս 3ին, անցեալ ուրբաթ: Մարդի Ֆրանսական դեսպան Պ. Ֆէրօ՝ Պ. Ժիւլ Կրէվիի ներկայացուց Մարդիներն, որք Կըրանդ Օդէլէ Էլիզէի պալատը տարուեցան Նախագահական կառքերով: Նախագահը Մարդիներն ընդունեց չղջապատեալ իւր նախարարներով և զօրավարներով: Մարդի

դեսպանը Պ. Ֆէրոյի միջոցաւ յայնեցին այն բարեկամական զգացումներ զորս Մարդի Սուլթանը կը տածէ Ֆրանսայի նըկատմամբ: Նախագահն ալ յայտնեց Ֆրանսայի համակրանքը Մարդի վրայ, և երկուց երկրաց միջեւ բարեկամական յարաբերութեանց մշակման փափաքը: Մարդիք յայնժամ Սուլթանին կողմէ 10 ընտիր նըժոյգներ ընծայեցին Նախագահին: Պ. տը Պլովիճ կիմանայ թէ Դեսպանութեան նըպատակն է շէշայիլի և Մարդի սահմանաց լաւագոյն գծում մը: Արդի սահմանք անկանոն են, և կապարի ու արծաթի հանք մը զոր Ֆրանսայիք կը բանեցնեն՝ վէճի նիւթ եղած գծին վրայ է, և շարունակ դժտութեանց առիթ կուտայ հանք բանեցնողներուն և Սուլթանին հպատակ ցեղերու միջեւ:

— Բարիզի կառավարութիւնն հրահանգ ղրկեց իւր ընդհանուր հիւպատոսին յեգիպտոս՝ տեղեկութիւններ ստանալ Պ. Օլիվիէ Բէնի վրայօք, որոյ վիճակը գաղտնիք մ'է միշտ:

— Աւստրիացի հնագէտը ի Վերին Եգիպտոս, Լուքսոր, պեղումներ ընելով, երեւան ածեր են որձաքարէ (կրօնիք) հինգ շքեղ արձաններ, որք կ'ենթադրուի թէ Հըռամնէս Բ. Փարաւոնը կը ներկայացնեն: Զօրսը փնտսեալ են, բայց մին ամբողջ և անվթար մնացած է:

— Պապը Տըպլինի Արքեպիսկոպոս կարգեց զՏոք. Ուօլը, իուլանտացի ազգասիրաց ընտրելին, անտես ընելով զայն ընտրելի որ կ'ենթադրուէր թէ կը պաշտպանուէր անդէ կառավարութեան կողմէ: Տոք. Ուօլը Հռոմ կ'երթայ Արքեպիսկոպոսական պաշտաման հաստատումն ստանալու:

— Լորտ Ռանտոլֆ Զըրչիլ յաջողեցաւ վերընտրուիլ ի Ուստտոք, յաղթութիւն տալ ներով իւր արմատական հակառակորդի վըրայ, որ ստացաւ 403 ըուէ, մինչ պահպանողական երիտասարդ նախարարին տրուեցան 532 ըուէներ: Պահպանողական միւս նոր նախարարք եւս վերընտրեցան, ամենամեծ մասն առանց ընդդիմութեան բախելու Ազատականաց կողմէ:

Ն Ե Ր Ք Ի Ն

Գերմանական դեսպան Պ. Բատովիձ արձակուրդով մեկնեցաւ մայրաքաղաքէս ի Պէրլին :

— Առեւտրական եւ երկրագործական նախարարութիւնը գովելի գործունէութեամբ մը կը քննէ Վոսփորի երկու եղբորաց այգիներն ուր որթածճիւղի հետքեր նըշմարուած էին : Այս ըննութիւնը յոյժ գոհացուցիչ արդիւնք մ'ունեցած են եւրոպական եղբայր , ինչպէս նաեւ Քարթալի եւ Բէնտիքի այգիներուն համար : Իսկ Գատրգիւղի , Գըզլը-Թօփրաքի եւ Ֆէնէր-Պահլէի այգիներէն շատեր վարակեալ են աւերիչ ճճիէն զոր բնաջինջ ընել կ'աշխատուի :

— Յունաց Ամեն . Պատրիարքի հիւանդութիւնը սաստկանալու վրայ է , չափազանց աշխատութեանցը պատճառաւ : Բժըկաց խորհրդով Ն. Սրբազնութիւնն Հէյպէլի կղզին պիտի մնայ եւ չպիտի մասնակցի ո՛ր եւ է մտաւոր աշխատութեան , մինչեւ որ կատարելապէս ապաքինի :

— Թաթի կը ծանուցանէ թէ Հայտար-փաշայի երկաթուղեաց ընկերութիւնը չկարենալով հատուցանել այն գումար զոր պարտի կայս . կառավարութեան , Բ. Դուռը մտադիր է այդ ընկերութեան ձեռքէն առնուլ Հայտար-փաշայէն ի Նիկովիդիա գծի շահագործման արտօնութիւնն եւ յանձնել զայն ուրիշ ընկերութեան մը որ պահանջուած երաշխաւութիւնը կարենայ տալ :

— Մէրսինէն մինչեւ Ատանա կառուցանելի երկաթուղոյն համար շատ մը գործիքներ բերել կը տրուին Եւրոպայէն եւ այս ձեռնարկի յաջողութեան համար նոր մղում մը կը տրուի :

— Պետական խորհրդոյ անդամ Դուռթէնտայի փաշա , որ Դանուբի միջազգային Յանձնաժողովոյն մէջ օսման եան պատուիրակի պաշտօնը կատարելէ յետոյ մայրաքաղաքս վերադարձած էր , ինչպէս նաեւ Սիւէզի ջրանցին խորհրդոյն օմ պատուիրակ Հասան փաշա , իրենց պաշտօնին վերաբերեալ տեղեկագրերը մատուցին արտաքին գործոց նախարարութեան :

— Բ. Դուռը շրջաբերական մ'ուղղելով օտար դեսպանատանց յայտներէ թէ կայս . կառավարութիւնն հարկ կ'զգայ քննութեան ենթարկել Եւրոպիոյ մէջ հրատարակեալ ամեն տետրակ , դիրք եւ առհասարակ ամեն հրատարակութիւնը որք թղթատարութեան միջոցաւ Թուրքիա կը ներմուծուին ծրարով : Հետեւաբար Բ. Դուռը կը խնդրէ որ դեսպանատունք հարկ եղած հրամանները տան մայրաքաղաքին այլ եւ այլ օտար նամակատանց որպէս զի այս վերջինք թոյլ տան որ գրաքննիչ պաշտօնեայք աչքէ անցունեն հասած գրքերն ու տետրակները զանոնք իրենց տէրերուն յանձնելէ առաջ :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի Ն

Սամաթիոյ Եկեղեցւոյ շինութեան Մասնաժողովը շաբթուս սկիզբը նիստ ընելով ընդ նախագահութեամբ Ամեն . Ս. Պատրիարք Հօր , յետ խորհրդակցութեան որոշեց 1000 ոսկւոյ հանգանակութիւն մ'ընել մայրաքաղաքիս զանազան թաղերուն մէջ , շինութեան գործն ի գլուխ հանելու համար Բացի սոյն հանգանակութենէն , ինչպէս նաեւ Մնակեանի կտակին 500 ոսկիէն , նոյնպէս Մնակեանի ժառանգական խնդրոյն իրաւարար Մասնախմբի հասութից գումարէն եւ անցեալ տարի Սամաթիոյ մէջ հանգանակեալ 700 ոսկիէն , Եկեղեցւոյ շինութեան մնացեալ ծախքը պիտի հոգայ Յակոբեան Միքայէլ էֆէնտի , որ պիտի նշուիք 2500 ոսկւոյ գումար մը :

— Տիգրանակերտի ազգայինք հեռագրաւ շնորհակալութիւն յայտնած են ի Պատրիարքարան , Տ. Արիստաեէս Եպիսկոպոսի այցելու կարգուած լինելուն համար եւ Ն. Գերապատուութեան փութով ճամբայ հանուիլը կը խնդրեն :

— Տրապիզոնի նորընտիր առաջնորդ Գերգարեղին վարդապետ Արուստեանց յառաջիկայ երկուշաբթի օր կ'ուղեւորի յիւր պաշտօնատեղին :

— Կաւկասիոյ վաղեալ վարժարանաց մէջ պաշտօն ունեցող բոլոր պաշտօնեայք, տեսուչ, ուսուցիչ, ուսուցչուհի եւ, ստացած են իրենց մինչեւ յառաջիկայ սեպտեմբերի ամսաթիւներն որպէս զի չենդուրին ապրուստի կողմէ :

— Կը յիշուի թէ Գաղատիոյ կուսակալութեան ներքեւ գտնուող Նալլը-խանի մէջ համաճարակ հրդեհ մը պատահեցաւ վերջերս, ուստից մեծապէս վնասուեցան մանաւանդ տեղւոյն հայ բնակիչք :

Ս. Պատրիարք Հայրը խնդիրը Բ. Դրան ուշադրութեան մատուց թաղերիւն մը և կայսերական կառավարութեան գլխաւորին հայցեց տարաբաղդ հրկիղելոց վիճակին վրայ :

— Պատրիարք ազգ. ժողովոյ կողմէ ի Պատրիարքարան հասած պաշտօնագիր մը՝ յայտնելով թէ տեղւոյն եկեղեցւոյ գմբեթը վնասուած է և շինութեան համար հանգանակութեան մը ձեռնարկուած, կը խնդրէ որ մայրաքաղաքիս մէջ ալ հանգանակութիւն կատարելու արտօնութիւն տրուի : Խնդրը Խառն ժողովոյ պիտի ներկայացուի :

— Արժ. Տ. Յովհաննէս աւագ քահանայ Մկրեան որ Էջմիածնէն վերադառնալէն ի վեր ջերմով կը աագնապէր, ապաքինած լինելով, երէկ առաջին անգամ ցերեթիւնն ըրաւ Ամեն Ս. Պատրիարք Հօր և երկարօրէն տեսակցեցաւ Ն. Ամենապատուութեան հետ :

— Կրօն. ժողովը նկատելով որ եկեղեցականաց պաշտօնական տիտղոսներու մասին չիօթութիւնք տեղի կ'ունան յաճախ, իւր մէջէն Մասնախումբ մը կարգած է տիտղոսներու գործածութիւնը ճշդելու համար, այսինքն թէ ինչ տիտղոս պէտք է տալ առաջնորդ եպիսկոպոսաց, անպաշտօն եպիս-

կոպոսաց, վարդապետաց, քահանայից, և ըն :

Ամեն. Խրիմեան Հայրիկ յառաջիկայ կիրակի օր Ս. Պատարագ պիտի մատուցանէ ի Մայր եկեղեցւոյ :

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

ՊԱՐԱՀԱՆԴԻՍԻ ՄԻՍՅԵՈՒ ԸՆԿ. ՀԱՅՈՑ
Տուեալ է Փետրուարի 27/11 Մարտի, 1885

Մ Ո Ւ Տ Ք

	Օս. անի
Տոմարներէ և հանգանակութեանէ գոյացեալ հասոյթ	826 · 15
Նուէրք, որոց փոխարէն տուած	152 · 39
սակ չէ տրուած	71 ·
Հասոյթ օթեկաց	26 · 27
Հասոյթ վիճակահանութեան	172 · 48
Օտարաբնակ Հայերէ նուէր	1228 · 27

Ե Լ Ք

Թատրոնի վարձք	57 ·
Երաժիշտք	18 ·
Ելեքարական լոյս	16 ·
Տպագրութիւն և թղթեղէնք	18 · 69
Թատրոնի զարդարանաց, Կեդր. ծախուց, երթեւեկի, առժամեայ պաշտօնէից և զանազանք	64 · 77
	154 · 46

ԶՈՒՏ ՀԱՍՈՅԹ

Պատրաստ դրամ Ընկերութեան յանձնուած	1004 · 94
Ապառիկք	68 · 87
	1228 · 27

Ի Դիմաց Կարգադիր Յանձնախմբին

Դեր-Նախագահ	Նախագահ
ՍԵՊՈՒՀ ՄԱՔՍՈՒՏԵԱՆ	Մ. Հ. ՅՕՍԹԸՐ
Քարտուղ	Դանձապահ
Յ. Յ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ	Մ. ԷՍԱԵԱՆ



ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳԻՐՈՒԹԻՒՆ



NORTH BRITISH AND MERCANTILE
Insurance company
ՆՈՐԹ-Զ ՊՐԻԹԻՇ ԷՄ ՄԷՐԿԵՆԹԻԼ

NORTHERN
Assurance company
ՆՕՐԹ-ԶԸՐՆ

Լնդոնյի և Էյսաֆինի ապահովումներն

Ընկերություն	Անգլ. Լիր.
Արտոնեալ դրամագլուխ	3,000,000
Բաժանորդագրեալ դրամագլուխ	2,500,000
Վճարեալ »	625,000
Պահեստի դրամ հրդեհի պատահանվածներից դեմ	4,592,235
Կեսանքի պատահանվածներից դեմ պահեստի դրամ	3,841,494
	<u>6,058,429</u>
Հրդեհի ծիւղէն հասոյթ 1883 տարւոյ	4,486,865
Կեսանքի ծիւղէն հասոյթ 1883 տարւոյ	554,307
	<u>4,738,472</u>

Լնդոնյի և Էյսաֆինի ապահովումներն

Ընկերություն	Անգլ. Լիր.
Բաժանորդագրեալ դրամագլուխ	3,000,000
Վճարեալ »	300,000
Պահեստի դրամ հրդեհի պատահանվածներից դեմ	844,874
Կեսանքի պատահանվածներից դեմ պահեստի դրամ	4,778,300
	<u>2,890,474</u>
Հրդեհի ծիւղէն հասոյթ 1883 տարւոյ	520,206
Կեսանքի ծիւղէն հասոյթ 1883 տարւոյ	254,572
	<u>774,778</u>

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծանուցանէ թէ ինքն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դեմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանէ։ Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնողներու ինքզինք ներկայացնել։

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները։

MARITIME
Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Մովային ապահովումներն ընկերություն
Դրամագլուխ 500,000 Անգլ. փրա

Ստորագրեալը, շրջանաւերու և առագաստաւերու մէջի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ։


Գիններուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուղղութեամբ պէտք է դիմեն Ղալաթիոյ, Բոմբայի խանի անկիւնը՝ երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակին, առ. Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար յիշեալ Ընկերութեանց ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈՒՆՅԱՆ

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀՐԴԵՀԻ ԴԷՄ
ՌԵԼԻԵՆՍ

Մովային ապահովագրութիւն։ - Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուիլիամս, Եօրկիատիս խան Պահչէ - դարու, Պոլիս. կամ Ղալաթիոյ, Ալեքսիատի խան թիւ 15։

**ԼՈՖԹԸՆ ԵՒ ՉԻՍՆԵԼ
ՄԹԵՐԱՆՈՑ
ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ
ԳՈՐԾԵԱՑ**
ՔԻՒՐՔԻ ԳԱՌՈՒՍԸ, ՂԱԼԱԹԻԱ



«ՕՐԻԱՆ» Մականուանեալ հնձող մեքե-
նայն երկու ձիով կը քաշուի և կը կշռէ
300 օխա :

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Մեքենային կատարելագործութիւնը ե-
րաշխաւորեալ է : Գնողըն երբ դո՛հ չիւնի,
կրնայ ետ առնուլ իւր ստակն :
302

ԱՐՄԵՆԻԱ

ՀԱՅԵՐԷՆ ԼՐԱԳԻՐ

Ազգային, Քաղաքական, Գրական,
Գիտական, Եւայլն

Յառաջիկայ օգոստոս 1ին (20 յուլիս)
շաբաթ օրը պիտի հրատարակուի ՄԱՐ-
ՍԷՅԼԻ մէջ, շաբաթն երկու անգամ :
ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՆ ՇՍԲԱԹ օրեր

Տարեկան բաժանորդագիւնն է 20 Ֆրանգ-
Եւրոպայի համար, 1 օսմ. ոսկի՝ Թիւրքիայի
համար և 10 ռուբլ. թղթադրամ՝ Ռուսիայի
համար : Խմբագրութիւնն ինք կը վճարէ
փոստի ծախքը ամեն տեղի համար : Վճա-
րումները կԱՆՆԻԿ կը լինին : Տարեկանը
միանուագ վճարելու անկարողներէն դիւ-
րութեան համար կ'ընդունինք նաև մաս առ
մաս (վեցամսեայ կամ եռամսեայ) կանխիկ

վճարումներ, առանց ունէ յաւելում տնե-
լու տարեկան բաժնորդագիւնին վրայ :
Արժէ՞ի խմբագրութիւնը ծանօթ լինե-
լով Թիւրքիայի, Ռուսիայի և Պարսկաստանի
Հայերի դրութեան, նկատի կ'առնէ նոցա
տիրող պետութիւնների հաստատած օ-
րէնքները և ըստ այնմ կ'աշխատի հայ ազգի
մեծամասնութեան օգտակար մի թերթ լի-
նիլ :

Թերթն անպատճառ պիտի հրատարակ-
ուի որոշուած ժամանակը (Օգոստոս 1/20
Յուլիս) . ուստի հրաւէր կը կարդանք ամեն
ընթերցասէր Հայերին որ եթէ իրենց բաժ-
նորդագրութեամբ մեր թերթ քաջալերել
կը ցանկան, փութան իրենց հասցէն որո-
շակի գրել մեզ այժմէն որպէս զի Ա. Թիւր
հրատարակած ժամանակ, իմացած լինինք
արդէն թէ քանի՞ բաժնորդ պիտի կրնանք
ունենալ և ըստ այնմ անենք մեր նախա-
պատրաստութիւններ : Թերթին վերաբեր-
եալ նամակ կամ ծրար կարելի է փոստով
ուղղակի ղրկել խմբագրին, Մ. Բորթու-
գալեան, Սրմէնի փողոց, Թիւ 2 (ՕթէԼ
Ֆոռէ), ՄԱՐՍԻԼԵԱ (Ֆրանսա) :

Համարադրո՞ւ Խմբագիր-Տնօրէն
ՖԵԼԻԿՍ ԱՆՖԱՆԳԷՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1886 տարւոյ ՊԱՐԶ ՕՐԱՅՈՅՅՆ ԵՒ
ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅՆ այժմէն պատ-
րաստուելու վրայ լինելով, առեւտրա-
կան, արհեստական եւ ուրիշ ծանու-
ցումներ այսօրուրէն կ'ընդունուին :

Առաջնոյն համար, որ 40,000 օրինակ
կը ծախուի, ծանուցմունք պէտք է
ղրկուին մինչեւ Յունիսի վերջն, եւ
երկրորդին համար՝ որ 6000 օրինակ կը
ծախուի, մինչեւ Յուլիսի վերջը :

Դիմել առ Գարեգին էֆ. Պաղտատ-
լեան, հրատարակիչ այդ օրացուցից,
Պոլիս, Չաքմաքճըլար, 13, Յակոբեան
խան :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՅ